Հարցաշար

1. Նշված պնդումներից ո՞րն է համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին:
   1) ***քաղաքացիական իրավունակությունը իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունն է:***
   2) քաղաքացիական իրավունակությունը միայն իրավունքներ ունենալու ունակությունն է:
   3) քաղաքացիական իրավունակությունը միայն պարտականություններ կրելու ունակությունն է:
   4) իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունն է:

2. Նշված պնդումներից ո՞րն է համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին
   1) քաղաքացիական իրավունքությունը ճանաչվում է միայն չափահասների համար հավասարապես,
   2) քաղաքացիական իրավունքությունը ճանաչվում է միայն գործունակ անձանց համար հավասարապես,
   3) քաղաքացիական իրավունքությունը ճանաչվում է միայն անչափահասների համար հավասարապես,
   4) ***քաղաքացիական իրավունքությունը ճանաչվում է բոլորի համար հավասարապես:***

3. Նշված պնդումներից ո՞րն է համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին
   1) քաղաքացիների իրավունակությունը չի ներառում սեփականության իրավունքով գույք ունենալը,
   2) քաղաքացիների իրավունակությունը չի ներառում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը
   3) քաղաքացիների իրավունակությունը ներառում է միայն գույքային իրավունքներ ունենալը
   4) ***քաղաքացիների իրավունակությունը ներառում է բնակության վայր ընտրելը:***

4. Նշված պնդումներից ո՞րն է համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին
   1) յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է ունենալ կեղծանուն,
   2) յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օգտագործել կեղծանուն,
   3) ***քաղաքացին իրավունքներ և պարտականություններ է ձեռք բերում ու իրականացնում իր անվամբ***
   4) ոչ բոլոր քաղաքացիները կարող են ունենալ կեղծանուն:

5. Քաղաքացու անունը ներառում է նրա
   1) բացառապես նրա անունը, ազգանունը, հայրանունը և գտնվելու վայրը,
   2) միայն նրա ազգանունը
   3) միայն նրա հայրանունը
   4) ***նրա անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը:***

6. Նշված պնդումներից ո՞րն է համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին

1) ***Քաղաքացու անվան փոխելը հիմք չէ նախորդ անվամբ ձեռք բերված նրա իրավունքները և պարտականությունները դադարելու կամ փոփոխելու համար,***
2) Քաղաքացու անվան փոխելը հիմք է նախորդ անվամբ ձեռք բերված նրա իրավունքները և պարտականությունները դադարելու կամ փոփոխելու համար,
3) Քաղաքացու անվան փոխելը հիմք չէ նախորդ անվամբ ձեռք բերված նրա իրավունքները և պարտականությունները դադարելու, բայց հիմք է փոփոխելու համար,
4) Քաղաքացու անվան փոխելը հիմք չէ նախորդ անվամբ ձեռք բերված նրա իրավունքները և պարտականությունները դադարելու կամ փոփոխելու համար, միայն, եթե նա այդ մասին տեղյակ է պահել պարտապաններին և պարտատերերին:

7. Քաղաքացու անվան ապօրինի օգտագործմամբ նրան պատճառված վնասը
   1) ***ենթակա է հատուցման՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին համապատասխան,***
   2) ենթակա չէ փոխհատուցման,
   3) ենթակա է փոխհատուցման միայն իրական վնասի մասով,
   4) ենթակա չէ փոխհատուցման միայն բաց թողնված օգուտի մասով:

8. Ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի բնակության վայր է համարվում
   1) ***այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է,***
   2) այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես հաշվառված է,
   3) այն վայրը, որտեղ քաղաքացին բնակվում է իր ընտանիքի հետ,
   4) այն վայրը, որտեղ քաղաքացին վճարում է հարկերը:

9. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասների կամ խնամակալության տակ գտնվող քաղաքացիների բնակության վայր է համարվում
   1) ***նրանց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ խնամակալների բնակության վայրը,***
   2) նրանց ժառանգություն թողնված անշարժ գույքի գտնվելու վայրը՝ նրանց չափահաս դառնալուց հետո,
   3) ուսումնական հաստատությունը,
   4) միայն ծնողների բնակության վայրը:

10. Քաղաքացու գործառնությունն ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի լրիվ ծավալով ծագում է
    1) ծննդյան պահից,
    2) ***չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից,***
    3) չափահաս, այսինքն՝ տասնչորս տարեկան դառնալու պահից,
    4) չափահաս, այսինքն՝ քսանմեկ տարեկան դառնալու պահից:

11. Տասնվեց տարին լրացած անչահասը ե՞րբ կարող է լրիվ գործունակ ճանաչվել.
    1) ***եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ,***

2) եթե նա չի աշխատում աշխատանքային պայմանագրով, բայց առանց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ,
3) եթե նա իրականացնում է զինվորական ծառայություն,
4) եթե նրա գործողությունները հետագայում ճանաչվում են օրինական՝ ներկայացուցիչների կողմից:

12. Էմանսիպանցիան կատարվում է
1) զինվորական ծառայության անցնելով,
2) ***խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով,***
3) առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման, ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով,
4) խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ անչափահասները լրիվ գործունակ չեն ճանաչվում:

13. Նշված պնդումներից ո՞րը չի համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին.
1) անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր կարող է կնքել ամուսնացած անչափահասը, որովհետև ամուսնությամբ նա ձեռք է բերում լրիվ գործունակություն,
2) անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր կարող է կնքել ամուսնալուծված անչափահասը, որովհետև ամուսնալուծության դեպքում նրա լրիվ գործունակությունը պահպանվում է,
3) ***անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր չի կարող կնքել ամուսնալուծված անչափահասը, որովհետև ամուսնալուծության դեպքում նրա լրիվ գործունակությունը դադարում է մինչև չափահաս դառնալը,***
4) անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր կարող է կնքել ամուսնացած անչափահասը առանց իր օրինական ներկայացուցչի համաձայնության:

14. Քաղաքացին իր պարտավորությունների համար
1) պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով առանց որևէ սահմանափակման
2) պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, ինչպես նաև համատեղ սեփականությունում մյուս համատեղ սեփականատերերին պատկանող գույքով,
3) պատասխանատու է իրեն պատկանող գույքի միայն այն մասով, որի վրա օրենքով չի կարող բռնագանձում տարածվել,
4) ***պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում:***

15. Փոքրահասակների փոխարեն գործարքները կարող են կնքել
1) միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները,

2) ***միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները, բացառությամբ օրենսգրքով սահմանված որոշ տեսակի գործարքներից, որոնք վեցից մինչև տասնչորս տարեկան անչափահասը կարող է կնքել ինքնուրույն,***
3) միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները, բացառությամբ օրենսգրքով սահմանված որոշ տեսակի գործարքներից, որոնք մինչև վեց տարեկան անչափահասը կարող է կնքել ինքնուրույն,
4) ոչ ոք չի կարող՝ առանց փոքրահասակի կողմից տրված գրավոր և նոտարական կարգով հաստատված լիազորագրի:

16. Քաղաքացին կարող է դատարանով անգործունակ ճանաչվել
1) ***եթե հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք,***
2) եթե հոգեկան խանգարման հետևանքով կարող է հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք,
3) եթե հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը, բայց կարող է ղեկավարել դրանք,
4) եթե հոգեկան խանգարման հետևանքով կարող է հասկանալ իր գործողությունների նշանակությունը, բայց չի կարող ղեկավարել դրանք

17. Քաղաքացու գործունակությունը չի կարող դատարանով սահմանափակվել
1) ոգելից խմիչքների չարաշահման դեպքում
2) թմրամիջոցների չարաշահման դեպքում,
3) մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու դեպքում,
4) ***մոլեխաղերով հրապուրվելու դեպքում՝ անկախ ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հանգամանքից:***

18. Եթե վերացել են այն հիմքերը, որոնց ուժով սահմանափակվել է քաղաքացու գործունակությունը, ապա նրա գործունակության սահմանափակումը
1) ***վերացվում է դատարանի կողմից,***
2) վերանում է ինքնաբերաբար,
3) վերացվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից,
4) չի վերանում:

19. Խնամակալները և հոգաբարձուները հանդես են գալիս իրենց խնամարկյալների իրավունքների ու շահերի պաշտպանությամբ
1) խնամարկյալների գրավոր լիազորությամբ,
2) խնամարկյալների հանձնարարությամբ,
3) խնամարկյալի հետ ունեցած խնամակալության պայմանագրի համաձայն,
4) ***առանց հատուկ լիազորության:***

20. Նշվածներից որի՞ նկատմամբ չի կարող սահմանվել խնամակալություն
1) տասնչորս տարին չլրացած անչափահասների,

2) հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների
3) ***տասնչորս տարին լրացած անչափահասների***
4) տասնչորս տարին լրացած, բայց հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների:

21. Նշվածներից որի՞ նկատմամբ չի կարող սահմանվել հոգաբարձություն
1) տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների,
2) սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների,
3) ***տասնչորս տարին չլրացած անչափահասների,***
4) տասնվեց տարին լրացած անչահասների նկատմամբ:

22. Նշված տարբերակներից ո՞րը չի համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին.
1) խնամակալները խնամարկյալների ներկայացուցիչներն են օրենքի ուժով
2) խնամակալները հանդես են գալիս խնամարկյալների անունից
3) խնամակալները ի շահ խնամարկյալների կնքում են բոլոր անհրաժեշտ գործարքները,
4) ***խնամակալների ի շահ խնամարկյալների կնքված գործարքներով իրավունքներ և պարտականություններ են ձեռք բերում խնամարկյալի ծնողները:***

23. Խնամակալներ և հոգաբարձուներ նշանակվում են
1) ***չափահաս գործունակ քաղաքացիները***
2) չափահաս անգործունակ քաղաքացիները
3) անչափահաս գործունակ քաղաքացիները
4) ծնողական իրավունքներից զրկված քաղաքացիները

24. Խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարվում են
1) միայն անհատույց
2) ***անհատույց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի***
3) միայն վճարովի հիմունքներով
4) պետական պատվերով:

25. Եթե վերացել են այն հիմքերը, որոնց ուժով քաղաքացին ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, ապա
1) նոտարը պարտավոր է միջնորդել դատարան՝ խնամարկյալին գործունակ ճանաչելու և նրա նկատմամբ սահմանված խնամակալությունը կամ հոգաբարձությունը վերացնելու համար
2) ***խնամակալը կամ հոգաբարձուն պարտավոր է միջնորդել դատարան՝ խնամարկյալին գործունակ ճանաչելու և նրա նկատմամբ սահմանված խնամակալությունը կամ հոգաբարձությունը վերացնելու համար***
3) դատարանն, առանց խնամակալի և հոգաբարձության միջնորդության պարտավոր է խնամարկյալին գործունակ ճանաչելու և նրա նկատմամբ սահմանված խնամակալությունը կամ հոգաբարձությունը վերացնելու համար

4) խնամարկյալն ինքնաբերաբար ճանաչվում է գործունակ:

26. Խնամարկյալ քաղաքացու եկամուտները՝ ներառյալ խնամարկյալին իր գույքի կառավարումից հասանելիք եկամուտները, բացառությամբ այն եկամուտների, որոնք խնամարկյալը կարող է տնօրինել ինքնուրույն
    1) ***խնամակալը կամ հոգաբարձուն ծախսում են միայն ի շահ խնամարկյալի՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի նախնական թույլտվությամբ,***
    2) խնամակալը կամ հոգաբարձուն պետք է հանձնեն հավատարմագրային կառավարման,
    3) խնամակալը կամ հոգաբարձուն չեն ծախսում
    4) խնամակալը կամ հոգաբարձուն ծախսում են միայն ի շահ խնամակալի՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի նախնական թույլտվությամբ:

27. Խնամարկյալի հետ գործարքներ կնքելու իրավունք ունեն
    1) ***խնամակալը, եթե գործարքը խնամարկյալին անհատույց գույք հանձնելու գործարք է,***
    2) Խնամակալը, եթե գործարքը հատուցելի է,
    3) հոգաբարձուն, եթե այդ գործարքով խնամարկյալն իրեն անհատույց գույք է հանձնում,
    4) մերձավոր ազգականները, եթե այդ գործարքով խնամարկյալն իրենց հատուցելի հիմունքներով գույք է հանձնում,

28. Խնամակալության և հոգաբարձության մարմինը խնամակալին կամ հոգաբարձուին ազատում է իր պարտականությունների կատարումից.
    1) անչափահասին՝ մինչև իր ծնողներին վերադարձնելը,
    2) ***անչափահասին՝ որդեգրելու դեպքում,***
    3) անչափահասի՝ գրավոր դիմումի հիման վրա,
    4) անչափահասին՝ մինչև իր ծնողներին վերադարձնելը և անչափահասին որդեգրելու դեպքում:

29. Չափահաս քաղաքացիների նկատմամբ խնամակալությունը և հոգաբարձությունը դադարում են
    1) ***խնամակալի, հոգաբարձուի կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա՝ խնամարկյալին գործունակ ճանաչելու կամ նրա գործունակության սահմանափակումները վերացնելու մասին դատարանի վճռով***
    2) խնամակալի, հոգաբարձուի կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի կողմից, առանց դիմելու դատարան
    3) դատարանի կողմից՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությամբ
    4) խնամակալի, հոգաբարձուի կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա՝ խնամարկյալին գործունակ ճանաչելու կամ նրա գործունակության սահմանափակումները վերացնելու մասին արբիտրաժային տրիբունալի որոշման հիման վրա:

30. Նշված տարբերակներից ո՞րն է համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին

1) Փոքրահասակ խնամարկյալի տասնչորս տարին լրանալիս նրա նկատմամբ խնամակալությունը չի դադարում.
2) Փոքրահասակ խնամարկյալի տասնչորս տարին լրանալուց հետո նրա նկատմամբ խնամակալությունը դադարում է, իսկ խնամակալի պարտականություններ իրականացնող քաղաքացին, խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշմամբ, դառնում է անչափահասի հոգաբարձուն.
3) ***Փոքրահասակ խնամարկյալի տասնչորս տարին լրանալիս նրա նկատմամբ խնամակալությունը դադարում է, իսկ խնամակալի պարտականություններ իրականացնող քաղաքացին, առանց այդ մասին լրացուցիչ որոշման, դառնում է անչափահասի հոգաբարձուն***
4) Փոքրահասակ խնամարկյալի տասնչորս տարին լրանալիս նրա նկատմամբ խնամակալությունը դադարում է, իսկ խնամակալի պարտականություններ իրականացնող քաղաքացին, առանց այդ մասին լրացուցիչ որոշման, դառնում է անչափահասի ծնողը:

31. Պատրոնաժ սահմանելը
1) ***չի հանգեցնում քաղաքացու իրավունքների սահմանափակման,***
2) հանգեցնում է քաղաքացու իրավունքների սահմանափակման,
3) չի հանգեցնում քաղաքացու իրավունքների սահմանափակման, բացառությամբ գրավոր գործարքներ կնքելիս,
4) սահմանափակում է քաղքացուն անհայտ բացակայող ճանաչելու հնարավորությունը:

32. Շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե
1) ***մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին***
2) մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա բնակության վայրի մասին
3) երկու տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա բնակության վայրի մասին
4) երկու տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին

33. Եթե հնարավոր չէ որոշել այն ամիսը, երբ ստացված են եղել բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունները, ապա անհայտ բացակայող ճանաչելու համար ժամկետի հաշվարկի սկիզբ է համարվում
1) այդ տարվա դեկտեբերի երեսունմեկը,
2) ***հաջորդ տարվա հունվարի մեկը,***
3) հաջորդ տարվա դեկտեբերի երեսունմեկը,
4) այդ տարվա հունվարի մեկը:

34. Անհայտ բացակայող ճանաչված անձի գույքի կառավարիչը
1) ***բացակայող անձի գույքի հաշվին մարում է նրա պարտքերը***

2) գույքը կառավարում է ի շահ նրա պարտատերերի,
3) բացակայող անձի հաշվին մարում է անհայտ բացակայող անձի մասնակցությամբ իրավաբանական անձանց պարտքերը,
4) իր գույքի հաշվին մարում է բացակայող անձի պարտքերը:

35. Անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու հայտնվելու կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերվելու դեպքում
1) ***դատարանը վերացնում է նրան անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը***
2) խնամակալության և հոգաբարձության մարմինը վերացնում է նրան անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը
3) դատարանը անհայտ բացակայողին ճանաչում է հարություն առած
4) կառավարիչը վերացնում է նրան անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը:

36. Քաղաքացին դատարանով կարող է մահացած ճանաչվել, եթե
1) ***նրա բնակության վայրում երեք տարվա ընթացքում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին,***
2) եթե նա անհայտ կորել է այնպիսի հանգամանքներում, որոնք մահվան վտանգ են սպառնացել կամ հիմք են տալիս ենթադրելու նրա մահը որոշակի դժբախտ դեպքի հետևանքով՝ տասն ամսվա ընթացքում,
3) նրա բնակության վայրում երկու տարվա ընթացքում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին,
4) նրա գտնվելու վայրում երեք տարվա ընթացքում տեղեկություններ չկան նրա բնակության վայրի մասին:

37. Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացին կարող է մահացած ճանաչվել
1) ***դատարանով՝ ոչ շուտ, քան ռազմական գործողությունների ավարտից երկու տարի հետո,***
2) դատարանով՝ ոչ շուտ, քան ռազմական գործողությունների ավարտից երեք տարի հետո,
3) դատարանով՝ ոչ շուտ, հայցային վաղեմության ժամկետի լրանալուց հետո,
4) առանց դատարանի՝ ոչ շուտ, քան ռազմական գործողությունների ավարտից երեք տարի հետո:

38. Մահացած ճանաչված քաղաքացու հայտնվելու կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերվելու դեպքում
1) ***դատարանը վերացնում է նրան մահացած ճանաչելու մասին վճիռը,***
2) դատարանը մահացած ճանաչված անձին ճանաչում է հարություն առած,
3) դատարանը վերացնում է մահացած ճանաչված անձին
4) դատարանը վերացնում է նրան մահացած ճանաչելու համար հիմք հանդիսացած հանգամանքները:

39. Մահացած ճանաչված քաղաքացու գույքը հատուցելի գործարքներով ձեռք բերած անձինք պարտավոր են նրան վերադարձնել այդ գույքը, եթե
   1) ***ապացուցվում է, որ գույքը ձեռք բերելիս նրանք գիտեին, որ մահացած ճանաչված քաղաքացին կենդանի է,***
   2) ապացուցվում է, որ գույքը ձեռք բերելիս նրանք չգիտեին, որ մահացած ճանաչված քաղաքացին կենդանի չէ,
   3) ապացուցվում է, որ գույքը ձեռք բերելիս նրանք գիտեին, որ մահացած ճանաչված քաղաքացին երկքաղաքացի է,
   4) եթե գույքը ձեռք բերելիս նրանք գիտեին կամ պարտավոր էին իմանալ, որ մահացած ճանաչված քաղաքացին շահագրգիռ անձ է:

40. Նշվածից ո՞րը չի համարվում պետական գրանցման ենթակա քաղաքացիական կացության ակտ.
   1) ծնունդը
   2) ***կնունքը***
   3) ամուսնությունը
   4) մահը

41. Նշված տարբերակներից որն է համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին:
   1) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը, իր հայեցողությամբ փոփոխում է քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումները.
   2) ***Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը, բավարար հիմքերի առկայության ու շահագրգիռ անձանց միջև վեճի բացակայության դեպքերում, ուղղում և փոփոխում է քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումները.***
   3) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը, բավարար հիմքերի առկայության կամ շահագրգիռ անձանց միջև վեճի դեպքերում, ուղղում և փոփոխում է քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումները,
   4) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը, բավարար հիմքերի առկայության ու շահագրգիռ անձանց միջև վեճի բացակայության դեպքերում, դիմում է դատարան իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման համար:

42. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից գրառման ուղղումը կամ փոփոխումը մերժելու դեպքում վեճը լուծում է
   1) ՀՀ Արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայությունը
   2) ՀՀ Արդարադատության նախարարության ԻԱ պետ ռեգիստրը
   3) ***Դատարանը***
   4) Ազգային ժողովը

43. Իրավաբանական անձը կարող է ունենալ
   1) հիմնադիր պայմանագրով նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ,

2) հիմնադիր փաստաթղթով նախատեսված գործունեության նպատակներին չհամապատասխանող քաղաքացիական իրավունքներ,
3) ***կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ,***
4) քաղաքապետի որոշմամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ

44. Նշված տարբերակներից ո՞րն է ամբողջությամբ համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին.
1) ***Իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման և դադարում է լուծարման ավարտի պահից.***
2) Իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է նրա կանոնադրական կապիտալի ձևավորման պահից և դադարում է լուծարման ավարտի պահից.
3) Իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է հիմնադիր պայմանագրի կնքման պահից և դադարում է լուծարման ավարտի պահից.
4) Իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման և դադարում է լուծարման վերջնական հաշվեկշռի ներկայացման պահից:

45. Իրավաբանական անձի կողմից այնպիսի գործունեություն իրականացնելու իրավունքը, որով զբաղվելու համար անհրաժեշտ է հատուկ թույլտվություն (լիցենզիա), ծագում է
1) Իրավաբանական անձի ստեղծման պահից
2) միայն նման թույլտվությունը ստանալու պահից
3) ***նման թույլտվությունը ստանալու պահից կամ դրանում նշված ժամկետում***
4) հատուկ թույլտվության տրման պահից մեկ ամսյա ժամկետում:

46. Նշվածներից ո՞րն է խնամակալին կամ հոգաբարձուին ազատում իր պարտականությունների կատարումից
1) դատարանը
2) կառավարիչը
3) ***խնամակալության և հոգաբարձության մարմինը***
4) խնամարկյալը:

47. Նշված տարբերակներից որն է համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին.
1) ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար քաղաքացին իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակիցը.***
2) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար քաղաքացին իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ, բայց չի կարող լինել դրանց մասնակիցը.
3) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար քաղաքացին իրավունք չունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակիցը.
4) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար քաղաքացին կարող է ստեղծել հասարակական կազմակերպություններ կամ լինել դրանց մասնակիցը.

48. Նշված տարբերակներից ո՞րն է համապատասխանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին.
   1) ***Քաղաքացու իրավունակությունից կամ գործունակությունից լրիվ կամ մասնակի հրաժարվելուն և նրա իրավունակության կամ գործունակության սահմանափակելուն ուղղված գործարքներն առոչինչ են.***
   2) Քաղաքացու իրավունակությունից կամ գործունակությունից լրիվ կամ մասնակի հրաժարվելուն և նրա իրավունակության կամ գործունակության սահմանափակելուն ուղղված գործարքները վիճահարույց են.
   3) Քաղաքացու իրավունակությունից կամ գործունակությունից լրիվ կամ մասնակի հրաժարվելուն և նրա իրավունակության կամ գործունակության սահմանափակելուն ուղղված գործարքները կնքվում են գրավոր ձևով և ենթակա են նոտարական վավերացման
   4) Քաղաքացու իրավունակությունից կամ գործունակությունից լրիվ կամ մասնակի հրաժարվելուն և նրա իրավունակության կամ գործունակության սահմանափակելուն ուղղված գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

49. Քաղաքացու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը շոշափող եղանակով կամ ձևով նրա անունն աղավաղելու կամ օգտագործելու դեպքում կիրառվում են
   1) ***պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ ՀՀ Քաղաքացիականօրենսգրքի համապատասխան դրույթները***
   2) համատեղ սեփականության վերաբերյալ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները
   3) մտավոր սեփականության վերաբերյալ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները
   4) Պատվի և արժանապատվության պաշտպանության միջազգային կոնվենցիան

50. Ո՞ր քաղաքացիները չեն կարող ինքնուրույն կնքել նոտարական վավերացում պահանջող գործարքներ
   1) Օտարերկրյա չափահաս քաղաքացիները
   2) ***Վեցից մինչև տասնչորս տարեկան քաղաքացիները***
   3) քաղաքացիություն չունեցող չափահաս անձինք
   4) Վեցից մինչև տասնչորս տարեկան քաղաքացիների օրինական ներկայացուցիչները:

51. Նոտարը, մասնագիտական գործունեություն ծավալելիս, նշված ո՞ր կանոններով կամ նորմերով չի ղեկավարվում.
   1) ՀՀ Նոտարական էթիկայի կանոններով
   2) Լատինական նոտարիատի միջազգային միության նորմերով
   3) ***Եվրոպական միության նոտարական էթիկայի կանոններով***
   4) Նոտարական էթիկայի եվրոպական կանոններով

52. ՀՀ Նոտարական էթիկայի կանոններով պահանջվում է՝
   1) ***արժանին մատուցել ճշմարտությանը***

2) զոհ մատուցել ճշմարտությանը
3) թեյ մատուցել ճշմարտությանը
4) անարժանին մատուցել ճշմարտությունը

53. ՀՀ Նոտարական էթիկայի կանոնները նոտարից պահանջում են խորհրդակցել
1) ***իր պատվի հետ***
2) քաղաքապետի հետ
3) բանտապետի հետ
4) իր պետի հետ

54. ՀՀ Նոտարական էթիկայի կանոնները նոտարից պահանջում են
1) սահմանափակվել նախաճաշով
2) սահմանափակվել քաղցրավենիքով
3) ***սահմանափակվել օրենքով***
4) չսահմանափակվել ոչնչով

55. Նոտարի առաքելությունն, ըստ ՀՀ Նոտարական էթիկայի կանոնների՝
1) ***քաղաքացիաիրավական վեճեր թույլ չտալն է***
2) դատական վեճերը լուծելն է
3) արդարադատության իրականացումն է
4) շահույթ ստանալն է:

56. Ինչպե՞ս պետք է նոտարները վերաբերվեն իրավաբան գործընկերներին՝ ըստ ՀՀ Նոտարական էթիկայի կանոնների
1) վստահությամբ և անբարյացկամությամբ
2) անվստահությամբ և բարյացկամությամբ
3) ***վստահությամբ և բարյացկամությամբ***
4) հայրենասիրությամբ և մարդասիրությամբ

57. Նշվածներից ո՞րն է նոտարի պարտականությունը
1) ***Մշտապես բարձրացնել մասնագիտական մակարդակը***
2) Գործն ավարտելուց առաջ զեկուցել նոտարական պալատ
3) Աշխատանքային ժամերին հանգստանալ առնվազն երեք ժամ
4) Չծխել

58. Արդյո՞ք նոտարը պետք է խուսափի քաղաքական կուսակցություններում և միավորումներում մասնակցությունից
1) Այո
2) ***Ոչ***
3) Այո, բայց միայն լիազորված անձի միջոցով
4) Այո, բայց նոտարական պալատի նախնական համաձայնությամբ:

59. Նշված դեպքերից ե՞րբ է նոտարը պարտավոր մերժել նոտարական գործողության կատարումը
   1) ***եթե անձի պահանջը օրենքի սահմաններից դուրս է***
   2) եթե անձը նոտարական գրասենյակում հանդես է գալիս լիազորագրի հիման վրա
   3) եթե անձը չի ներկայացնում նոտարին բավարար հիմնավորումներ, թե այդ գործողությունն ինչի համար է պետք իրեն
   4) եթե անձը պահանջում է օրենքով սահմանված գործողություն:

60. Ո՞րն է համարվում նոտարի կարգապահական պատասխանության հիմքը
   1) ***Նոտարի կողմից նոտարական գործողությունների ոչ պատշաճ կատարումը կամ կատարելուց ձեռնպահ մնալը, նոտարի կողմից վարվեցողության էթիկայի նորմերի և այլ պահանջների խախտումը որոնք նախատեսված են «Նոտարիատի մասին» ՀՀ Օրենքով***
   2) Նոտարիատի կողմից էթիկետի խախտումը
   3) Նոտարի կողմից էթիկետի խախտումը
   4) Նոտարի կողմից ճանապարհային երթևության կանոնների խախտումը

61. Նշվածներից ո՞րն է նոտարի կարգապահական պատասխանատվության հիմք
   1) օրենսդրությանը համապատասխանող նոտարական գործողություններ կատարելը
   2) գիտական գործունեությամբ զբաղվելը
   3) մանկավարժական գործունեությամբ զբաղվելը
   4) ***նոտարական գաղտնիքը հայտնելը***

62. Նշվածից ո՞րը նոտարի կարգապահական պատասխանատվության միջոց չէ
   1) նախազգուշացումը
   2) նկատողությունը
   3) խիստ նկատողությունը
   4) ***որակավորման քննություններին մասնակցելուն պարտավորեցնելը***

63. Նոտարական ժողովներից առանց հարգելի պատճառի երեսուն և ավելի րոպե ուշանալու դեպքում, ո՞ր պատասխանատվության միջոցը կարող է կիրառվել.
   1) նոտարը կարող է ստանալ բացակա
   2) նոտարը կարող է հեռացվել լսարանից
   3) ***նոտարը կարող է ենթարկվել դրամական տույժի***
   4) նոտարի ձեռքից կարող են վերցնել անձը հաստատող փաստաթուղթը

64. Նշված տարբերակներից ո՞րը նոտարի խրախուսման միջոց չէ.
   1) շնորհակալություն
   2) գործուղում միջազգային միջոցառումներին մասնակցելու համար
   3) ***գործուղում հանգստի***
   4) պատվոգիր

65. Նոտարի խրախուսման մասին որոշումը կարող է ընդունել՝

1) նոտարը
2) նոտարի թարգմանիչը
3) նոտարական պալատի նախագահը
4) ***նոտարական պալատը***

66. Քաղաքացիական իրավունակությունը՝
1) գործում է մինչև քաղաքացու /կամ անձի/չափահաս դառնալը
2) ***բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես.***
3) ծագում է քաղաքացու չափահաս դառնալուն պես.
4) կարող է սահմանափակվել շահագրգիռ անձի դիմումի հիման վրա՝ դատարանի վճռով.

67. Ո՞ր գործարքներն են համարվում հետաձգող պայմանով կնքված՝
1) ***գործարքը համարվում է հետաձգող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների ծագումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հայտնի չէ՝ կիրականանա, թե՞ ոչ (օրինակ՝ եթե ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքը գերազանցի XXX-ը).***
2) գործարքը համարվում է հետաձգող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների ծագումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հաստատ կիրականանա ապագայում (օրինակ՝ 2012 թ. մարտի մեկից).
3) գործարքը համարվում է հետաձգող պայմանով կնքված, եթե պայմանագիրը պետք է ուժի մեջ մտնի ապագայում՝ կոնկրետ ժամկետում (օրինակ՝ 2012 թ. մարտի 1-ին).
4) քաղաքացիական օրենսդրությունը այդպիսի հասկացողություն չունի և գործարքները չեն կարող կնքվել հետաձգող պայմանով.

68. Ո՞րն է գործարքի նոտարական ձևը չպահպանելու հետևանքը՝
1) գործարքի նոտարական ձևը չպահպանելը՝ վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի և նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից.
2) ***գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության. նման գործարքն առոչինչ է.***
3) Նշված գործարքը համարվում է չկնքված.
4) նման գործարքը միայն դատարանը իր վճռով կարող է ճանաչել անվավեր.

69. Ստորև բերվածներից ո՞րն է համապատասխանում ժամանակահատվածով որոշվող ժամկետի ավարտի հաշվարկի մեթոդաբանությանը՝
1) ***տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին.***
2) ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա վերջին օրը.
3) կես ամսով որոշվող ժամկետը դիտվում է որպես օրերով հաշվարկվող ժամկետ և համարվում է հավասար տասնչորս օրվա.

4) տարվա եռամսյակը համարվում է երեք ամսին հավասար և հաշվարկվում է ժամկետի սկզբի օրվանից սկսած.

70. Որտե՞ղ է կատարվում պարտավորությունը, եթե պարտավորության կատարման վայրը որոշված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով՝
1) անկախ պարտավորության տեսակից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, պարտավորությունը պետք է կատարվի պարտապանի բնակության (ֆիզիկական անձ) կամ գտնվելու (իրավաբանական անձ) վայրում.
2) անկախ պարտավորության տեսակից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, պարտավորությունը պետք է կատարվի պարտատիրոջ բնակության (ֆիզիկական անձ) կամ գտնվելու (իրավաբանական անձ) վայրում.
3) ավտոմեքենա հանձնելու պարտավորությունը կատարվում է Ճանապարհային ոստիկանության համապատասխան ստորաբաժանման տարածքում.
4) ***գույք հանձնելու պարտավորությամբ, որը նախատեսում է դրա փոխադրումը՝ գույքը պարտատիրոջը հասցնելու համար առաջին փոխադրողին հանձնելու վայրում.***

71. Ի՞նչ է երաշխիքը՝
1) երաշխիք տված անձը, երաշխիքի համաձայն, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար.
2) ***երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինի կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս.***
3) երաշխիք է համարվում այն դրամական գումարը, որը պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվին տալիս է մյուս կողմին՝ իբրև պայմանագրի կնքման ապացույց և դրա կատարման ապահովում.
4) երաշխիքը՝ երաշխիք տվող անձի նկատմամբ պրինցիպալի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է պրինցիպալի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար.

72. Ե՞րբ է պայմանագիրը համարվում կնքված՝
1) պայմանագիրը համարվում է կնքված օֆերտան ուղարկելուց հետո դրա ակցեպտը փոստին հանձնելու պահից.
2) ցանկացած պայմանագիր համարվում է կնքված նոտարի կողմից պայմանագրի տեքստի տակ նոտարական կնիք դնելու պահից.
3) ***պայմանագիրը համարվում է կնքված օֆերտան ուղարկած անձի կողմից դրա ակցեպտը ստանալու պահից.***
4) Մատակարարման պայմանագիրը համարվում է կնքված մատակարարի կողմից գույքը գնորդին հանձնելու պահից

73. Ստորև նշված պայմանագրերից որո՞նք են ռեալ պայմանագրեր՝
   1) ***փոխառության պայմանագիրը.***
   2) Ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը
   3) վարձույթի պայմանագիրը.
   4) վարկի պայմանագիրը.

74. Ի՞նչ ձևով պետք է կողմերը ամրագրեն պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու իրենց համաձայնությունը՝
   1) պայմանագրի փոփոխման համաձայնությունը ենթակա է պարտադիր նոտարական վավերացման, հակառակ դեպքում այն անվավեր է.
   2) ավտոմեքենայի վարձակալության պայմանագրի փոփոխությունները պետք է կատարվեն նոտարական վավերացված համաձայնագրի ձևով, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրում.
   3) պայմանագիրը հնարավոր է փոփոխել բացառապես դատարանի վճռով.
   4) ***պայմանագրի փոփոխման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից.***

75. Ի՞նչ իրավական հետևանք(ներ) է ունենում անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրում դրա գինը չնախատեսելը՝
   1) ***անշարժ գույքի պայմանագիրը համարվում է չկնքված.***
   2) անշարժ գույքի գինը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 440 հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ գնի որոշման կանոններով.
   3) համարվում է, որ կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիր.
   4) կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել դատարան, պայմանագիրը փոփոխելու և անշարժ գույքի գինը հաստատելու համար՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 440 հոդվածի 3-րդ կետով նախատեսված գնի որոշման կանոնները.

76. Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով և անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով, ե՞րբ է համարվում անշարժ գույքը գնորդին հանձնելու՝ վաճառողի պարտականությունը կատարված
   1) անշարժ գույքը փաստացի գնորդին հանձնելը բավարար է պարտավորությունը կատարած համարելու համար.
   2) անշարժ գույքը հանձնելու պարտավորությունը պատշաճ կատարելու համար բավարար է փոխանցման ակտը երկկողմ ստորագրելը.
   3) ***անշարժ գույքը հանձնելու պարտավորությունը համարվում է պատշաճ կատարված այդ գույքը գնորդին հանձնելուց և հանձնելու փոխանցման ակտը երկկողմ ստորագրելուց հետո.***
   4) անշարժ գույքը համարվում է գնորդին հանձնված գույքի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը գրանցելու պահից.

77. Ստորև թվարկվածներից ովքե՞ր են սեփականության իրավունքի սուբյեկտներ՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝
   1) ***քաղաքացիները.***
   2) իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումները.
   3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը
   4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը.

78. Ինչպիսի՞ գույքային իրավունքներ չեն կարող ունենալ սեփականատեր չհամարվող անձինք՝
   1) գույքի օգտագործման իրավունք.
   2) հոսանքի լարերի անցկացման սերվիտուտ.
   3) ***Գույքը գնելու իրավունք.***
   4) գրավի իրավունք.

79. Ե՞րբ է առաջանում սեփականության իրավունքը նոր ստեղծված անշարժ գույքի նկատմամբ՝
   1) անշարժ գույքի կառուցման կամ շինարարության նախագիծը օրենքով նախատեսված բոլոր համաձայնությունները և դրա համար համապատասխան թույլտվությունները ստանալու պահից.
   2) անշարժ գույքի շինարարության փաստացի ավարտի պահից.
   3) ***անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման պահից.***
   4) շինարարական կապալի պայմանագրի համաձայն համապատասխան հանձնման-ընդունման ակտը երկկողմ հաստատելու պահից.

80. Գույքի ապառիկ վաճառքի դեպքում հնարավոր է արդյո՞ք գնի վերահաշվարկ՝ հաշվի առնելով վաճառված գույքի գնի հետագա փոփոխությունները՝
   1) ***գնի հետագա փոփոխությունները հիմք են վերահաշվարկ կատարելու համար, եթե դա նախատեսված է պայմանագրով.***
   2) գնի հետագա փոփոխությունները հիմք են վերահաշվարկ կատարելու համար, և վերջին վճարը վճարելի գնորդը պարտավոր է վճարել ապրանքի թանկացման հետևանքով գոյացած տարբերությունը, կամ նվազեցնել ապրանքի էժանացման հետևանքով գոյացած գնի տարբերությունը՝ հաշվի առնելով 411 հոդվածով նախատեսված տոկոսները.
   3) անկախ պայմանագրում նախատեսված դրույթներից, ապրանքի գնի հետագա փոփոխությունները հիմք չեն վերահաշվարկ կատարելու համար:
   4) գնի հետագա փոփոխությունները հիմք են վերահաշվարկ կատարելու համար, ընդ որում, յուրաքանչյուր հետագա վճարում կատարելիս հաշվի է առնվում գնի փոփոխությունները վճարման օրվա դրությամբ, և վճարը համապատասխանաբար ավելացվում կամ նվազեցում է գնի փոփոխությանը համաչափ.

81. Ի՞նչ է ռենտան (ռենտայի պայմանագիրը)՝

1) ռենտայի պայմանագրով մի կողմը (ռենտա ստացողը) մյուս կողմին (ռենտա վճարողին) օգտագործման և (կամ) տիրապետման իրավունքով հանձնում է գույք, իսկ ռենտա վճարողը պարտավորվում է ստացողին այդ գույքի դիմաց պարբերաբար վճարել ռենտա՝ որոշակի գումար.
2) ***ռենտայի պայմանագրով մի կողմը (ռենտա ստացողը) մյուս կողմին (ռենտա վճարողին) սեփականության իրավունքով հանձնում է գույք, իսկ ռենտա վճարողը պարտավորվում է ստացողին այդ գույքի դիմաց պարբերաբար վճարել ռենտա՝ որոշակի գումար.***
3) ռենտայի պայմանագրով մի կողմը (ռենտա ստացողը) մյուս կողմին (ռենտա վճարողին) սեփականության իրավունքով հանձնում է գույք, իսկ ռենտա վճարողը պարտավորվում է ռենտա ստացողին մինչև նրա կյանքի վերջը խնամել և հոգ տանել նրա համար պայմանագրով նախատեսված ծանրաբեռնվածությամբ.
4) ռենտայի պայմանագրով մի կողմը (ռենտա ստացողը) մյուս կողմին (ռենտա վճարողին) սեփականության իրավունքով հանձնում է գույք, իսկ ռենտա վճարողը պարտավորվում է այդ գույքը օգտագործել միայն ռենտայի պայմանագրում նախատեսված նպատակով.

82. Ո՞ր դեպք(եր)ում նվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապագայում նվիրառուին գույք կամ իրավունք փոխանցելու խոստում կատարելու պայմանագիրը կատարելուց (հրաժարվել նվիրատվության պայմանագիրը կատարելուց)՝
1) նվիրատուն իրավունք ունի հրաժարվել նվիրատվության պայմանագիրը կատարելուց, եթե նվիրառուն նվիրատուի մերձավոր ազգականներից որևէ մեկին պատճառել է դիտավորյալ մարմնական վնասվածքներ.
2) նվիրատուն իրավունք չունի վերացնել նվիրատվության պայմանագիրը այլ հիմքերով, քան ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսված պայմանագրերը լուծելու ընդհանուր հիմքերն են.
3) նվիրատուն, մինչև համապատասխան գույքը նվիրառուին հանձնելը, իսկ անշարժ գույքի դեպքում, մինչև դրա նկատմամբ իրավունքների գրանցումը իրավասու է ցանկացած պահի, առանց հավելյալ պատճառի և հիմքերի, հրաժարվել նվիրատվության պայմանագիրը կատարել.
4) ***նվիրատուն իրավունք ունի հրաժարվել նվիրատվության պայմանագիրը կատարել, եթե պայմանագիրը կնքելուց հետո նվիրատուի գույքային կամ ընտանեկան դրությունը այնքան է վատթարացել, որ նոր պայմաններում պայմանագրի կատարումը կառաջացնի նրա կենսամակարդակի էական իջեցում.***

83. Քանի՞ վկա պետք է ներկա լինի փակ կտակի վավերացմանը.
1) մեկ
2) ***երկու***
3) երեք
4) վկա չպետք է լինի

84. Ժառանգության բացման ժամանակ պարդատիր բաժնի իրավունք ունեն՝
1) ժառանգատուի անչափահաս երեխաները, քույրերը և եղբայրները.

2) ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառան-գատուի երեխաները, ամուսինը, ծնողները, քույրերն ու եղբայրները.
3) ***ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները.***
4) ժառանգատուի՝ հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված երեխաները, ծնողները, ամուսինը, քույրերը, եղբայրները, հորեղբայրները, հորաքույրները, քեռիները, մորաքույրները.

85. Երկրորդ հերթի ժառանգներ են՝
1) ***ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը.***
2) ժառանգատուի հարազատ եղբայրները, քույրերը, մորական և հորական տատերն ու պապերը.
3) ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը.
4) պապերը, տատերը և թոռները.

86. Կտակը վավերացնելիս վկա չի կարող լինել՝
1) կտակարարի երեխան.
2) կտակարարի երեխաները և ամուսինը.
3) կտակարարի երեխաները, ամուսինը և ծնողները.
4) ***այն անձի ամուսինը, երեխաները և ծնողները, ում օգտին արվել է կտակային հանձնարարություն:***

87. Ըստ օրենքի ժառանգների թվին են պատկանում այն անաշխատունակ անձինք,
1) ովքեր մինչև ժառանգատուի մահն առնվազն երկու տարի գտնվել են նրա խնամքի ներքո.
2) ովքեր մինչև ժառանգատուի մահն առնվազն վեց ամիս գտնվել են նրա խնամքի ներքո.
3) ***ովքեր մինչև ժառանգատուի մահն առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի ներքո.***
4) ովքեր ժառանգատուի մահվանից մեկ տարի առաջ գտնվել են նրա խնամքի ներքո:

88. Ինչ ժամկետում կարող է ընդունվել ժառանգությունը.
1) ***ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում.***
2) ժառանգության բացման օրվանից մեկ տարվա ընթացքում.
3) ժառանգության բացման օրվանից երեք ամսվա ընթացքում.
4) ժառանգական գույքի հայտնաբերման պահից վեց ամսվա ընթացքում.

89. Ինչպե՞ս չի կարող սահմանվել վարձավճարը՝
1) վարձավճարը սահմանվում է պարբերաբար կամ միաժամանակ վճարվող որոշակի կայուն գումար.

2) ***վարձավճարը կարող է սահմանվել վարձակալի կողմից իր որևէ ստեղծագործության նկատմամբ հեղինակության իրավունքը վարձատուին փոխանցելով.***
3) վարձավճարը սահմանվում է վարձակալի կողմից որոշակի ծառայություններ մատուցելու պարտականություն.
4) վարձավճարը կարող է սահմանվել վարձակալված գույքը բարելավելու համար պայմանագրով նախատեսված ծախսերը վարձակալի վրա դնելու միջոցով.

90. Ֆինանսական վարձակալության պայմանագրում գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի մասին դրույթների բացակայության մասին, ո՞ր պահից է այդ ռիսկը անցնում վարձակալին՝
1) լիզինգի պայմանագիրը կնքելու պահից.
2) ***վարձակալած գույքը վարձակալին հանձնելու պահից.***
3) լիզինգի պայմանագրի համաձայն վարձատուի կողմից գույքը վաճառողից ընդունելու պահից.
4) գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալին անցնելու պահից (եթե սեփականության իրավունքի փոխանցում լիզինգի պայմանագրով նախատեսված է).

91. Ո՞վ է կրում անհատույց օգտագործման հանձնված գույքի ընթացիկ և հիմնական վերանորոգման պարտականությունը, պայմանագրում դրա մասին դրույթների բացակայության դեպքում՝
1) հիմնական վերանորոգման պարտականությունը կրում է փոխատուն, իսկ ընթացիկ վերանորոգմանը՝ փոխառուն.
2) ինչպես հիմնական, այնպես էլ ընթացիկ վերանորոգման պարտականությունը կրում է փոխատուն.
3) ընթացիկ վերանորոգման պարտականությունը կրում է փոխառուն, իսկ հիմնական վերանորոգման պարտականությունը կրում են փոխառուն և փոխատուն հավասարապես.
4) ***ինչպես հիմնական, այնպես էլ ընթացիկ վերանորոգման պարտականությունը կրում է փոխառուն.***

92. Նշվածներից որո՞նք են ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք՝
1) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը.
2) առևտրային կոոպերատիվը.
3) ***հասարակական միավորումը.***
4) փակ բաժնետիրական ընկերությունը.

93. Նշվածներից որո՞նք են գրավի տեսակներ՝
1) ամուր գրավ.
2) փափուկ գրավ.
3) ***կոշտ գրավ.***
4) պայմանական գրավ.

94. Ե՞րբ է ծագում գրավի իրավունքը գրավականի դեպքում՝
   1) գրավի պայմանագիրը գրավատուի և գրավառուի կողմից ստորագրելու պահից, անկախ գրավի առարկան գրավառուին հանձնելու ժամանակից.
   2) ***գրավի առարկան գրավառուին հանձնելու պահից, սակայն ոչ շուտ քան պայմանագիրը կնքելը.***
   3) գրավի պայմանագիրը նոտարական վավերացում ստանալու պահից.
   4) գրավի առարկայի վրա գրավառուի կողմից համապատասխան գրավի մասին վկայող նշան դնելու պահից.

95. Նշվածներից ո՞րն է հիփոթեք՝
   1) հիփոթեք է համարվում այն գրավը, որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով.
   2) հիփոթեք է համարվում շարժական գույքի գրավը, որն, ի ապահովումն կարճաժամկետ վարկերի, գրավադրվում է համապատասխան թույլտվություն (լիցենզիա) ունեցող մասնագիտական կազմակերպությունում՝ գրավատանը.
   3) ***հիփոթեք է համարվում անշարժ գույքի գրավը.***
   4) հիփոթեք է համարվում բեռնատար ավտոմեքենայի գրավը.

96. Ի՞նչ իրավունքներ չեն ծագում անձի մոտ ձեռքբերման վաղեմության հիմքով՝ կախված գույքի տեսակից և այլ պայմաններից՝
   1) սեփականության իրավունք.
   2) ***սերվիտուտի իրավունք.***
   3) սեփականության ձեռքբերման նախապատվության իրավունք.
   4) օգտագործման իրավունքի նախապատվության իրավունք.

97. Կտակի առկայության դեպքում, նշվածներից որի ժամանակ ժառանգությունը պետք է կատարվի ըստ օրենքի՝
   1) եթե ժառանգներ չկան
   2) եթե դա պահանջում են ժառանգները.
   3) եթե դա պահանջում է ժառանգներից որևիցե մեկը.
   4) ***եթե կտակում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը.***

98. Ո՞վ կարող է դիմել դատարան անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելու պահանջով՝
   1) ժառանգության գործը վարող նոտարը.
   2) ***նույն հերթի այլ ժառանգները.***
   3) այլ ժառանգներ, ովքեր տվյալ ժառանգի հեռացումից գույքային իրավունքներ չեն ստանում.
   4) դատախազը.

99. Ի՞նչ կարգով է բաշխվում ժառանգական գույքի չկտակված մասը՝

1) ***կտակարարի գույքի չկտակված մասը բաշխվում է ըստ օրենքի ժառանգների միջև, որոնք ժառանգության են հրավիրվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72 գլխով սահմանված կարգով, ընդ որում այդ գույքի, ըստ օրենքի ժառանգմանը մասնակցում են նաև այն ժառանգները, ովքեր ըստ կտակի ժառանգել են գույքի մնացած մասը.***
2) կտակարարի գույքի չկտակված մասը բաշխվում է ըստ օրենքի ժառանգների միջև, որոնք ժառանգության են հրավիրվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72 գլխով սահմանված կարգով, ընդ որում այն ժառանգները, ովքեր ըստ կտակի ժառանգել են գույքի մյուս մասը, չեն մասնակցում մնացած գույքի ըստ օրենքի ժառանգմանը.
3) կտակարարի գույքի չկտակված մասը բաշխվում է կտակում նշված անձանց միջև, ըստ կտակված գույքի համամասնությունների.
4) կտակարարի գույքի չկտակված մասը առաջնահերթ ուղղվում է ժառանգության պարտադիր բաժնի իրավունքի իրականացմանը, իսկ ավելանալու դեպքում՝ բաշխվում է կտակում նշված ժառանգների միջև՝ կտակում նշված համամասնություններով, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 71 գլխում նախատեսված կանոններով.

100. Այն դեպքերում, երբ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան կտակը կազմելիս, ստորագրելիս կամ վավերացնելիս պետք է ներկա լինեն վկաներ, ո՞վ իրավասու չէ հանդես գալու որպես վկա՝
1) նոտարի՝ լրիվ գործունակ հարևանը.
2) ***նոտարը.***
3) նոտարի գրասենյակի հարևան գրասենյակի աշխատակիցը
4) այն անձի ծնողները, ում օգտին կազմվել է կտակը.

101. Ի՞նչ հետևանք(ներ) է ունենում դատարանի կողմից կտակում պարունակվող առանձին կտակային կարգադրությունը անվավեր ճանաչելը՝
1) կտակում պարունակվող առանձին կտակային կարգադրության անվավերությունը բերում է ամբողջ կտակի անվավերության.
2) ***կտակում պարունակվող առանձին կտակային կարգադրության անվավերությունը չի հանգեցնում կտակի մնացած մասի անվավերության.***
3) կտակում պարունակվող առանձին կտակային կարգադրությունը չի կարող անվավեր ճանաչվել. կտակը կամ վավեր է ամբողջությամբ, կամ ամբողջությամբ անվավեր է.
4) կտակում պարունակվող առանձին կտակային կարգադրության անվավերությունը հանգեցնում է ամբողջ կտակի անվավերությանը, պայմանով, որ դա վերաբերում է ժառանգության զանգվածում պարունակվող անշարժ գույքի առավել արժեքավոր մասին.

102. Առաջին հերթի ժառանգներ են՝
1) ժառանգատուի եղբայրը.
2) ժառանգատուի հայրական կողմի պապը.
3) ***ժառանգատուի ծնողները.***
4) ժառանգատուի քրոջ երեխաները ներկայացման իրավունքով.

103. Ժառանգատուի խնամքի տակ գտնվող անաշխատունակ անձինք, ո՞ր հերթի ժառանգների հետ են ժառանգում՝
1) ***այն հերթի ժառանգների հետ միասին, որը ժառանգության է հրավիրվում.***
2) երրորդ հերթի ժառանգների.
3) չորրորդ հերթի ժառանգների.
4) ժառանգատուի խնամքի տակ գտնվող անաշխատունակ անձինք ժառանգների թվին չեն դասվում.

104. Ըստ օրենքի ժառանգի բաժինը անցնում է նրա երեխաներին, եթե
1) ըստ օրենքի տվյալ ժառանգը հրաժարվել է ժառանգությունից.
2) ***ըստ օրենքի տվյալ ժառանգը մահացել է մինչև ժառանգության բացումը.***
3) ըստ օրենքի տվյալ ժառանգը մեկուսացվել է ժառանգությունից.
4) ըստ օրենքի տվյալ ժառանգը ժառանգատուի կողմից զրկված է ժառանգությունից.

105. Ի՞նչ է տեղի ունենում, երբ ըստ օրենքի ժառանգության հրավիրված ժառանգը ժառանգության բացումից հետո, չհասցնելով այն ընդունել, մահանում է՝
1) տվյալ ժառանգին հասանելիք ժառանգությունը բաշխվում է մնացած ժառանգներին հավասարաչափ
2) ***տվյալ ժառանգին հասանելիք ժառանգությունն ընդունելու իրավունքն անցնում է նրա ժառանգներին.***
3) տվյալ ժառանգին հասանելիք ժառանգությունը անցնում է ժառանգության բացման վայրի համայնքի սեփականությանը.
4) տվյալ ժառանգին հասանելիք ժառանգությունն ընդունելու իրավունքն անցնում է միայն նրա ամուսնուն.

106. Նշվածներից ո՞րը չի համարվում ժառանգությունը պահպանելու համար նոտարի կողմից ձեռնարկվող գործողություն՝
1) կատարում է ժառանգական զանգվածի գույքագրում.
2) ժառանգության զանգվածի մեջ մտնող թանկարժեք քարերից պատրաստված գույքը պահատվության համար հանձնում է բանկ.
3) ժառանգության զանգվածի մեջ մտնող կանխիկ դրամը մուծում է նոտարի դեպոզիտ.
4) ***ժառանգության զանգվածի մեջ մտնող կանխիկ դրամով բավարարում է ժառանգատուի պարտատերերի պահանջները.***

107. Ի՞նչ է կատարվում ժառանգության զանգվածում առկա կառավարման կարիք ունեցող գույքի հետ՝
1) կառավարման կարիք ունեցող գույքը հանձնվում է ժառանգության բացման վայրի համայնքի կառավարմանը.
2) ***կառավարման կարիք ունեցող գույքի նկատմամբ նոտարը, որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, կնքում է հավատարմագրային կառավարման պայմանագիր.***

3) կառավարման կարիք ունեցող գույքի նկատմամբ ժառանգներից մեկը, որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, կնքում է հավատարմագրային կառավարման պայմանագիր.
4) կառավարման կարիք ունեցող գույքի նկատմամբ բոլոր ժառանգները միասին՝ որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, կնքում են հավատարմագրային կառավարման պայմանագիր.

108. Նշվածներից որո՞նք չեն նկարագրում նոտարի իրավական պաշտպանության սկզբունքը՝
1) նոտարի աշխատանքային վայրը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ նոտարական պալատի ներկայացուցչի մասնակցությամբ.
2) նոտարի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցել միայն ՀՀ գլխավոր դատախազը.
3) ***նոտարի մոտ պահվող նոտարական ակտերը չեն կարող որևէ նպատակով, այդ թվում նաև ստուգման նպատակով, վերցվել.***
4) նոտարն ազատվում է վարժական հավաքներից.

109. Ո՞վ է իրականացնում նոտարի իրականացրած նոտարական գործողությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը՝
1) նոտարական պալատի նախագահը.
2) ***Արդարադատության նախարարությունը.***
3) ՀՀ վերահսկիչ պալատը.
4) այն համայնքի ղեկավարը, որտեղ գտնվում է նոտարական գրասենյակը.

110. Ո՞վ է սահմանում նոտարի աշխատանքային ռեժիմը՝
1) նոտարի աշխատանքային ռեժիմը սահմանվում է օրենքով, որը վերահսկում է արդարադատության նախարարությունը.
2) նոտարի աշխատանքային ռեժիմը սահմանվում է կառավարության որոշմամբ, որը վերահսկում է նոտարական պալատը.
3) ***նոտարի աշխատանքային ռեժիմը սահմանում է նոտարը, որը վերահսկվում է արդարադատության նախարարության կողմից.***
4) նոտարական պալատը սահմանում է բոլոր նոտարների աշխատանքային ռեժիմները և իրականացնում դրա նկատմամբ վերահսկողություն.

111. Ե՞րբ է նոտարը դառնում նոտարական պալատի անդամ՝
1) ***նոտարը նոտարական պալատի անդամ է դառնում պաշտոնում նշանակվելու օրվանից.***
2) նոտարը նոտարական պալատի անդամ է դառնում պալատի անդամության առաջին վճարը (անդամավճարը) վճարելու օրվանից.
3) նոտարը նոտարական պալատի անդամ է դառնում պաշտոնական երդման պահից.
4) նոտարը նոտարական պալատի անդամ է դառնում պաշտոնում նշանակելուց հետո երեսուներորդ օրը.

112.Քանի՞ օգնական կամ այլ աշխատողներ կարող է ունենալ նոտարը՝

1) նոտարի աշխատողների առավելագույն քանակը որոշում է նոտարական պալատը՝ հիմք ընդունելով նոտարի, որպես նոտար աշխատելու ստաժը.
2) ***նոտարի աշխատողների քանակը որոշում է նոտարը, առանց որևէ սահմանափակման.***
3) նոտարի աշխատողների քանակը որոշում է արդարադատության նախարարը, ընդ որում, բոլոր նոտարների համար սահմանվում է հավասար առավելագույն քանակ.
4) նոտարը չի կարող ունենալ օգնական կամ այլ աշխատող: Նոտարը կարող է ունենալ միայն ստաժորներ, որոնց քանակը յուրաքանչյուր տարի հաստատում է արդարադատության նախարարը՝ նոտարական պալատի ներկայացմամբ.

113. Ի՞նչ իրավասություններ ունի նոտարի ստաժորը՝

1) նոտարի ստաժորը իրավասու է, նոտարի բացակայության ժամանակ (ամենամյա կամ անաշխատունակության արձակուրդ) հաստատել պայմանագրեր և լիազորագրեր.
2) ***նոտարի ստաժորը իրավասու է կատարել քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություն.***
3) նոտարի ստաժորը իրավասու է իրականացնել գործարքների նախագծերի կազմում, ինչպես նաև նոտարի բացակայության ժամանակ՝ նոտարական գործողությունների կատարում (բացառությամբ ժառանգության վկայագրերի տրամադրում)
4) նոտարի ստաժորը իրավասու է քաղաքացիների հետ բանակցել նոտարական ծառայությունների համար գանձվող գումարի չափի վերաբերյալ.

114.Ի՞նչ եղանակով է հայերենին չտիրապետող անձը մասնակցում նոտարական գործողություններին՝

1) հայերենին չտիրապետող անձը պարտավոր է նոտարական գործողություններին մասնակցել ներկայացուցչի միջոցով՝ արտասահմանում տրված լիազորագրի հիման վրա.
2) ***հայերենին չտիրապետող անձը նոտարական գործողություններին կարող է մասնակցել թարգմանչի միջոցով.***
3) հայերենին չտիրապետող անձն իրավունք չունի մասնակցելու նոտարական գործողություններին, քանի որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է.
4) հայերենին չտիրապետող անձը կարող է մասնակցել հայերենով իրականացվող նոտարական գործողություններին, սակայն նա կրում է լեզուն չհասկանալու պատճառով հնարավոր վնասների ամբողջ ռիսկը.

115. Ինչպե՞ս է որոշվում նոտարի մոտ պահվող և գործարքի մասնակիցներին տրված փաստաթղթի օրինակների միջև գերակայության հարցը՝

1) բոլոր օրինակները նույնական են, և դրանց միջև առաջնահերթություն չկա՝ պայմանով, որ դրանք պարունակում են նոտարի ստորագրությունը և կնիքը.
2) ***նոտարի մոտ պահվող օրինակը համարվում է փաստաթղթի բնօրինակ, իսկ բնօրինակի և մյուս օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է բնօրինակին.***

3) եթե տվյալ փաստաթղթի հիման վրա կատարվում է պետական գրանցում, ապա բնօրինակ է համարվում համապատասխան պետական մարմին ներկայացված օրինակը, և նախապատվությունը տրվում է այդ օրինակին.
4) փաստաթղթերը վավերացնելիս, նոտարը դրանցից մեկի վրա կատարում է նշում առ այն, որ դա բնօրինակն է, և այդ օրինակը կարող է պահվել ինչպես նոտարի, այնպես էլ գործարքի մասնակիցների մոտ, ընդ որում, տվյալ բնօրինակի և փաստաթղթի մնացած օրինակների միջև հակասության առկայության դեպքում նախապատվությունը տրվում է բնօրինակին.

116. Նոտարը վավերացնում է փաստաթղթի թարգմանության իսկությունը, եթե
1) եթե փաստաթուղթը թարգմանված է էլեկտրոնային ավտոմատ թարգմանչական ծրագրով.
2) ***նա տիրապետում է համապատասխան լեզուներին.***
3) եթե փաստաթուղթը թարգմանված է զուգահեռ (սինխրոն).
4) Փաստաթղթի թարգմանության իսկության վավերացում նոտարները չեն կատարում.

117. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ՝
1) արտադատական կարգով.
2) ***դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի.***
3) ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերի.
4) դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում, կառավարության որոշման հիման վրա.

118. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ծնողական իրավունքից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն՝
1) խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում.
2) դատարանի որոշմամբ՝ ծնողների համաձայնությամբ.
3) խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշմամբ՝ նախնական լիարժեք փոխհատուցմամբ.
4) ***դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում.***

119. Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը՝
1) ոչ մի դեպքում հետադարձ ուժ չունեն.
2) հետադարձ ուժ ունեն, անկախ այդ ակտով նախատեսված լինելու հանգամանքից.
3) ***հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով.***
4) հետադարձ ուժ ունեն բոլոր դեպքերում.

120. Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝
1) կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական անհավասար շերտերով.
2) կարմիր, կապույտ, դեղին հորիզոնական հավասար շերտերով.

3) ***կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով***
4) կարմիր, կապույտ, նարնջագույն ուղղահայաց հավասար շերտերով.

121. Նոտարները հաշվառման են կանգնում՝
1) Երևանի ցանկացած հարկային տեսչությունում.
2) Հայաստանի Հանրապետության ցանկացած հարկային տեսչությունում.
3) ***այն հարկային տեսչությունում, որի սպասարկման տարածքում է գտնվում նոտարի նոտարական տարածքը.***
4) այն հարկային տեսչությունում, որի սպասարկման տարածքում չի գտնվում նոտարի նոտարական տարածքը.

122. Նոտարի բոլոր ծառայողական փաստաթղթերը՝
1) ***կազմվում են նրա ձևաթղթի վրա.***
2) կազմվում են չորս օրինակից, որից մի օրինակը պահվում է նոտարի մոտ, մի օրինակը ուղարկվում է Արդարադատության նախարարություն, մի օրինակը՝ ՀՀ Ազգային արխիվ և մի օրինակը՝ սփյուռքի նախարարություն.
3) համաձայնեցվում են Արդարադատության նախարարի համապատասխան տեղակալի հետ.
4) կազմվում են հաճախորդի ձևաթղթի վրա և թվագրումը դրվում է ստորագրության վերևում՝ աջից.

123. Նոտարական գրանցամատյանում գրանցումները պետք է կատարվեն՝
1) հայերենով՝ զուգահեռ թարգմանությամբ.
2) ***հայերենով.***
3) եթե հաճախորդը սփյուռքահայ է՝ արևմտահայերեն.
4) լատինատառ.

124. Նոտարի թեկնածուների ուսուցման դասընթացների ծրագրերը հաստատվում են՝
1) կրթության և գիտության նախարարության կողմից.
2) ***արդարադատության նախարարի կողմից.***
3) բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից.
4) արդարադատության խորհրդի կողմից.

125. Նոտարի կողմից փաստաթուղթը միաժամանակ մի քանի հասցեատերերի ուղարկվելու դեպքում՝
1) ***ստորագրվում են դրա բոլոր օրինակները.***
2) ստորագրվում է փաստաթղթի առաջին օրինակը.
3) ստորագրվում է փաստաթղթի բնօրինակի պատճենը.
4) փաստաթուղթը չի ստորագրվում.

126. Անձանց մոտ ե՞րբ է ծագում հողամասի օգտագործման իրավունքը՝
1) ***օգտագործման իրավունքի պետական գրանցման պահից.***

2) հողամասի օգտագործման իրավունքի պայմանագիրը նոտարական վավերացման պահից.
3) հողամասը փաստացի օգտագործել սկսելու պահից.
4) կողմերի կողմից հողամասի օգտագործման իրավունքի պայմանգիրը ստորագրելու պահից.

127. Նշվածներից ո՞րը չի համարվում հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների դադարման հիմք՝
1) հողամասից կամովին հրաժարվելու դեպքում.
2) հողամասն օտարելիս.
3) սեփականատիրոջ մահվան դեպքում, եթե չկան ժառանգներ.
4) ***հողամասի վրա ինքնակամ կառույցի կառուցապատման հետևանքով.***

128. Բաժնետիրական ընկերության Խորհուրդ պետք է ստեղծվի՝
1) եթե ընկերությունը ունի 100 բաժնետեր.
2) եթե ընկերության հասույթը նախորդ հաշվետու տարում գերազանցել է 58.35 մլն դրամը.
3) ***եթե ընկերությունում առկա են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերեր, որոնց քանակը գերազանցում է 50-ը.***
4) եթե ընկերությունը բանկ է կամ վարկային կազմակերպություն.

129. Երեխայի որդեգրման վերաբերյալ գործերի վարույթում ո՞րը չի համարվում դիմումում առաջադրվող պահանջ՝
1) որդեգրել ցանկացող անձի (անձանց) ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրը.
2) որդեգրվող երեխայի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ժամանակը և բնակության վայրը.
3) ***որդեգրել ցանկացող անձի (անձանց) կրթական ցենզի մասին տեղեկություններ.***
4) որդեգրել ցանկացող անձի (անձանց) ցանկության դեպքում նրա (նրանց) միջնորդությունը՝ որդեգրվող երեխայի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ժամանակը և վայրը փոփոխելու, իրեն (իրենց) որպես որդեգրվող երեխայի ծնող (ծնողներ) գրառելու մասին.

130. ՀՀ Նոտարական էթիկայի կանոններից բխում է, որ՝
1) նոտարն իրավունք ունի կոպտորեն վռնդել իրեն շատ հարցերով դիմող հաճախորդին.
2) ***նոտարական գրասենյակում հաստատել բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ.***
3) նոտարն իրավունք ունի հաճախորդին ենթարկել դաստիարակչական ծեծի.
4) նոտարն իրավունք ունի հաճախորդների հետ հարաբերություններում առաջնորդվել անձնական շահով.

131. Նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք չէ՝

1) օրենսդրությանը հակասող նոտարական գործողություն կատարելը.
2) նոտարական գործունեությամբ զբաղվելը՝ առանց մասնագիտական պատասխանատվության ռիսկի ապահովագրության.
3) ***նոտարական կնիքը օրենքով սահմանված կարգով պետական իրավասու մարմիններին հանձնելը.***
4) նոտարական պալատի անդամավճար չմուծելը՝ երեք և ավելի ամիս (անընդմեջ).

132. Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ ՝
1) պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, պայմանով, որ իր դատավարական հակառակորդը ևս ապացուցի իր վկայակոչած փաստերը.
2) պետք է հղում կատարի բոլոր այն ապացույցների վրա, որոնք ըստ իրեն հիմնավորում են իրենց պահանջները.
3) ***իրավունք ունի լրացուցիչ ապացույցներ ներկայացնել դատաքննության ընթացքում, եթե մինչև դատաքննությունը անկախ իր կամքից չի կարողացել դրանք ներկայացնել և առկա է եղել անհնարինություն.***
4) պարտավոր է կրել վիճելի մնացած փաստի առկայության կամ բացակայության հետևանքով բացասական հետևանքները.

133. ՍՊԸ-ի կանոնադրությունը հաստատելու մասին որոշումը հիմնադիրները պետք է ընդունեն՝
1) մասնակիցների որակյալ մեծամասնությամբ, բայց ոչ պակաս քան քվեարկության իրավունք տվող բաժնեմասերի 2/3-ը.
2) մասնակիցների կեսից ավելիի հավանության դեպքում.
3) ***միաձայն.***
4) մեկ մասնակից լինելու դեպքում միայն կանոնադրական կապիտալն ամբողջությամբ և նախապես վճարված լինելու պայմանով.

134. Վիճարկման հայցի դեպքում հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝
1) վարչական ակտը ուժի մեջ մտնելու պահից մեկ ամսյա ժամկետում.
2) երկու ամիս հետո՝ վարչական ակտի վերադասության կարգով բողոքարկելուց և մերժումը ստանալուց հետո.
3) ժամկետային սահմանափակում սահմանված չէ.
4) ***երկամսյա ժամկետում, այն պահին հաջորդող օրվանից սկսած, երբ համապատասխան վարչական ակտը առձեռն հանձնվել է հայցվորին.***

135. Բաժնետիրական ընկերությունը՝
1) կարող է թողարկել և տեղաբաշխել միայն փաստաթղթային անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր.
2) ***կարող է թողարկել հասարակ և արտոնյալ բաժնետոմսեր.***
3) չի կարող թողարկել օրենքով սահմանված այլ արժեթղթեր, քան հասարակ և արտոնյալ բաժնետոմսեր և պարտատոմսեր.
4) չի կարող թողարկել պարտատոմսեր, եթե ընկերությունը ապահովագրական ընկերություն է.

136. Կտակ վավերացնելիս՝
1) նոտարական գրասենյակ է հրավիրվում նաև այն անձը, ում կտակվում է գույք.
2) նոտարն այդ մասին տեղեկացնում է համապատասխան ժառանգներին.
3) ***չեն կարող պահանջվել կտակվող գույքի նկատմամբ սեփականության և այլ իրավունքը հաստատող ապացույցներ.***
4) կտակարարի փոխարեն կարող է կտակը ստորագրել նրա ներկայացուցիչը, եթե նրան տրված լիազորագրում առկա է այդ մասին հատուկ նշում.

137. Վարձույթի պայմանագրով՝
1) ***վարձակալության հանձնված գույքի հիմնական և ընթացիկ վերանորոգման պարտականությունը կրում է Վարձատուն.***
2) Վարձակալության հանձնված գույքի ընթացիկ վերանորոգման պարտականությունը կարող է դրվել Վարձակալի վրա
3) կարող է սահմանվել, որ Վարձակալը կրում է հիմնական վերանորոգման պարտականությունը, պայմանով, որ այդ ծախսերը հաշվանցվեն վարձավճարից.
4) վարձակալության հանձնված գույքի հիմնական վերանորոգման պարտականությունը կրում է Վարձատուն, իսկ ընթացիկ վերանորոգման պարտականությունը վարձակալը.

138. Երաշխավորը՝
1) կորցնում է առարկելու իրավունքը, եթե պարտապանը հրաժարվել է դրանցից կամ ընդունել է իր պարտքը.
2) ***իրավունք ունի պարտատիրոջ պահանջի դեմ առարկություններ անել նույնիսկ այն դեպքում, երբ պարտապանը ընդունել է պարտքը.***
3) եթե այլ բան է բխում Երաշխավորության պայմանագրից, ապա կարող է չընդունել պարտատիրոջ պահանջը և դրա հիմքով էլ զրկվում է նրա պահանջի դեմ առարկություն ներկայացնելու իրավունքից.
4) պարտավոր է, մինչև պարտատիրոջ պահանջը բավարարելը, ներկայացնել իր առարկությունները, որից հետո, սակայն, չի կարող այլևս ներկայացնել պարտատիրոջը.

139. Ո՞ր իրավունքը կարող է փոխանցվել ժառանգաբար՝
1) ***հեղինակային իրավունքը.***
2) հեղինակության իրավունքը.
3) հետկանչի իրավունքը.
4) անվան իրավունքը.

140. Ստորև նշվածներից ո՞րը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով չի համարվում գործարք՝
1) անշարժ գույքի վարձակալության պայմանագիր կնքելը
2) կտակ կազմելը
3) ***վարչական տուգանք վճարելը***
4) խանութից համակարգիչ գնելը

141.Ո՞ր գործարքներն են համարվում վերացնող պայմանով կնքված՝

1) Գործարքը համարվում է վերացնող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների դադարումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը պետք է միանշանակորեն իրականանա ապագայում (օրինակ՝ 2012 թ. փետրվարի 15-ին):
2) Գործարքը համարվում է վերացնող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների դադարումը կախման մեջ են դրել գործարքը կնքելուց հետո նախօրոք որոշված ժամկետը անցնելու հետ (օրինակ՝ գործարքը կնքելուց հետո մեկ տարի)
3) ***գործարքը համարվում է վերացնող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների դադարումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հայտնի չէ՝ կիրականանա՞ թե՞ ոչ:***
4) Քաղաքացիական օրենսդրությունը այդպիսի հասկացողություն չունի և գործարքները չեն կարող կնքվել վերացնող պայմանով:

142. Որքա՞ն ժամանակ մի անձը կարող է ներկայացնել այլ անձի՝

1) Առևտրային ներկայացուցչության դեպքում, եթե լիազորագրում նշված ժամկետը ավարտվել է, ապա մինչև լիազորագրով նշված ժամկետի ընթացքում սկսված բանակցությունների ավարտը, բայց ոչ ավելի քան լիազորագրում նշված ժամկետի ավարտից վեց ամիս հետո
2) Լիազորագրում նշված ժամկետում, բայց ոչ ավելի քան երկու տարի.
3) լիազորագրում նշված ժամկետում, բայց ոչ ավելի քան հինգ տարի.
4) ***եթե լիազորագրում նշված չէ ժամկետ, ապա լիազորագիրը տալուց մեկ տարվա ընթացքում.***

143. Քաղաքացիա-իրավական պարտավորությունների ծագման հիմք չէ՝

1) պայմանագիրը.
2) ***շահույթ կամ (և) եկամուտ ստանալը.***
3) վնաս պատճառելը.
4) անհիմն հարստացումը.

144. Ստորև նշվածներից ո՞ր դեպքում պարտապանը չունի պարտավորություն՝ իրենից գանձվելիք գումարը կամ արժեթղթերը նոտարի դեպոզիտ մուծելու միջոցով կատարելու իրավունք՝

1) ***Եթե պարտավորության կատարումն դժվարանում է նրանով, որ պարտապանը չի ցանկանում որևէ շփում ունենալ պարտատիրոջ հետ:***
2) եթե պարտապանը չի կարողանում կատարել պարտավորությունը, քանի որ պարտատերն անգործունակ է և ներկայացուցիչ չունի
3) եթե պարտապանը չի կարողանում կատարել պարտավորությունը, քանի որ պարտատերը խուսափել է կատարումն ընդունելուց կամ թույլ է տվել կետանց

4) եթե պարտապանը չի կարողանում կատարել պարտավորությունը, քանի որ ակնհայտորեն պարզ չէ, թե ով է պարտավորությամբ պարտատերը՝ ներառյալ պարտատիրոջ և այլ անձանց միջև այդ առթիվ վեճի առկայության դեպքում

145. Ստորև բերված՝ տուժանքի վերաբերյալ պնդումներից, որը չի համապատասխանում գործող ՀՀ օրենսդրությանը՝
1) տուժանքով ապահովվում է միայն իրական պահանջը.
2) դատարանն իրավունք ունի պակասեցնել տուժանքը, եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին.
3) ***Տուժանք վճարելու պահանջով պարտատերը կրում է պարտավորության չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ իրեն վնաս հասցնելու հանգամանքի ապացուցման բեռը.***
4) տուժանքի մասին համաձայնությունը պետք է կնքվի գրավոր՝ անկախ հիմնական պարտավորության ձևից:

146. Ի՞նչ է գրավը՝
1) Գրավ է համարվում այն դրամական գումարը, որ պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվին տալիս է մյուս կողմին՝ իբրև պայմանագրի կնքման ապացույց և դրա կատարման ապահովում.
2) ***գրավը (գրավի իրավունքը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար.***
3) Գրավատուն, գրավի (գրավի իրավունքի) համաձայն, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար.
4) Գրավատուն այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, գրավի պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

147. Ե՞րբ է համարվում փոխառության պայմանագիրը կնքված՝
1) Փոխառության պայմանագիրը համարվում է կնքված բանկի կամ այլ վարկային կազմակերպության կողմից փոխառուին փոխառության գումարը հանձնելու համաձայնության մասին կնքված փաստաթուղթ հանձնելու պահից:
2) Փոխառության պայմանագիրը համարվում է կնքված համապատասխան պայմանագրի տեքստը փոխառուի և փոխատուի կողմից ստորագրելու պահից.
3) Փոխառության պայմանագիրը համարվում է կնքված, երբ փոխատուն բանավոր հաստատում է իր համաձայնությունը փոխառության գումարը հանձնել փոխառուին
4) ***փոխառության պայմանագիրը համարվում է կնքված փոխառության գումարը փոխառուին հանձնելու պահից***

148. Ստորև նշված պայմանագրերից, որո՞նք են ենթակա պարտադիր նոտարական վավերացման, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով ՝
1) Երեսուն միլիոն և ավել գումարի փոխառության պայմանագիրը.
2) ***անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիրը***
3) ավտոտրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիրը.
4) հաստոցների գրավի պայմանագիրը:

149. Նշվածներից ո՞րը չի համարվում բնակելի տան առուվաճառքի պայմանագրի էական պայման՝
1) ***Բնակելի տան սենյակների քանակը:***
2) բնակելի տան որոշակիորեն սահմանող տվյալները (հասցեն, սեփականության վկայականի համարը և այլն)
3) բնակելի տան գինը
4) այն անձանց անվանացանկը, որոնց բնակելի տարածության օգտագործման իրավունքը, մինչև առուվաճառքի պայմանագիրը կնքելը, գրանցված է օրենքով սահմանված կարգով

150. Ու՞մ սեփականությունն է գույքի օգտագործման արդյունքում ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները), եթե այդ մասով բացակայում է որևէ կարգավորում օրենքում, այլ իրավական ակտերում կամ այդ գույքի օգտագործման մասին պայմանագրում՝
1) Գույքի օգտագործման արդյունքում ստացվածը պատկանում է այդ գույքի սեփականատիրոջը կամ նրա կողմից մատնանշված անձին (բենեֆիցիար):
2) ***գույքի օգտագործման արդյունքում ստացվածը պատկանում է այդ գույքը օրինական հիմունքներով օգտագործող անձին***
3) պայմանագրում համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում գույքի օգտագործման արդյունքում ստացվածը պատկանում է գույքի գտնվելու վայրի համայնքին, իսկ եթե գույքը շարժական է, ապա պետությանը:
4) Գույքի օգտագործման արդյունքում ստացվածը համարվում է սեփականատիրոջ և այդ գույքը օրինական հիմունքներով օգտագործող անձի համատեղ սեփականություն՝ հավասար չափաբաժիններով:

151. Եթե հեռուստացույցի նվիրատվության պայմանագրով չի նախատեսված նվիրառուի սեփականության իրավունքի ծագման պահը, ե՞րբ է այդ իրավունքը ծագում՝
1) նվիրառուի սեփականության իրավունքը ծագում է պայմանագիրը կնքելու պահից.
2) եթե կողմերի պահանջով պայմանագիրը անցնում է նոտարական վավերացում, ապա հեռուստացույցի նկատմամբ սեփականության իրավունքը անցնում է պայմանագրի նոտարական վավերացման պահից.
3) ***նվիրառուի սեփականության իրավունքը ծագում է հեռուստացույցը հանձնելու պահից.***
4) հեռուստացույցի նկատմամբ սեփականության իրավունքը անցնում է նվիրատվության մասին հրապարակային հայտարարելու պահից:

152. Ու՞մ սեփականության իրավունքն է ճանաչվում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ՝

1) նշված կառույցի նկատմամբ ճանաչվում է այն կառուցողի իրավունքը:
2) ***նշված կառույցի նկատմամբ ճանաչվում է համայնքի սեփականությունը***
3) նշված կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության սեփականությունը:
4) տվյալ կառույցը համարվում է տիրազուրկ գույք, և նրա նկատմամբ սեփականության իրավունքը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178 հոդվածով նախատեսված կանոններով:

153. Ինչպե՞ս կարող է կնքվել անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը՝

1) անշարժ գույքը չի կարող լինել առուվաճառքի առարկա. այս դեպքում փոխանցվում է միայն օգտագործման իրավունքը:
2) անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կարող է կնքվել նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի (օֆերտա և ակցեպտ փոխանակման միջոցով:
3) անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կարող է կնքվել անշարժ գույքը փաստացի հանձնելու և դրա դիմաց գումարը փաստացի ստանալու միջոցով՝ բանավոր համաձայնության հիման վրա, առանց որևէ ձևական պահանջներ իրականացնելու:
4) ***անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կարող է կնքվել գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որը ենթակա է նոտարական վավերացման***

154. Ստորև թվարկված պայմանագրերից ո՞րն է համարվում նվիրատվության պայմանագիր՝

1) Պայմանագիր, համաձայն որի, ՀՀ քաղաքացի Ա-ն հանձնում է ՀՀ քաղաքացի Բ-ին սեփականության իրավունքով իրեն պատկանող հեռուստացույցը, ինչի դիմաց Բ-ն համաձայնում է ներել Ա-ի՝ իր հանդեպ ունեցած դրամական պարտավորությունը (50000 ՀՀ դրամ).
2) ՀՀ քաղաքացի Ա-ի հայտարարությունը, որ ինքը պարտավորվում է իրեն պատկանող ողջ գույքը հանձնել ՀՀ քաղաքացի Բ-ին՝ պայմանով, որ հայտարարությունը կատարվում է գրավոր և վավերացվում է նոտարական կարգով.
3) ՀՀ քաղաքացի Ա-ի գրավոր հայտարարությունը, համաձայն որի Ա-ն պարտավորվում է իր մահվան դեպքում, սեփականության իրավունքով իրեն պատկանող Մերսեդես մակնիշի ավտոմեքենան անհատույց հանձնել Բ-ին.
4) ***պայմանագիր, համաձայն որի ՀՀ քաղաքացի Ա-ն պարտավորվում է պայմանագիրը կնքելուց հետո մեկ ամսվա ընթացքում անհատույց ՀՀ քաղաքացի Բ-ին սեփականության իրավունքով հանձնել իրեն պատկանող Մերսեդես մակնիշի ավտոմեքենան:***

155. Եթե հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետ պայմանագրում որոշված չէ, ի՞նչ ժամկետով է համարվում վարձակալության պայմանագիրը կնքված՝

1) պայմանագիրը համարվում է չկնքված, քանի որ վարձակալության ժամկետը վարձակալության պայմանագրի էական պայմաններից մեկն է:

2) համարվում է կնքված երեք տարով շարժական գույքի վարձակալության, և քառասունինը տարով անշարժ գույքի դեպքում.
3) Համարվում է կնքված տասը տարով.
4) ***պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:***

156. Ի՞նչ ձևով պետք է կնքվի շինության վարձակալության պայմանագիրը՝
1) ***շինության վարձակալության պայմանագիրը պարտադիր պետք է կնքվի գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, ինչը ենթակա է նոտարական վավերացման.***
2) շինության վարձակալության պայմանագիրը կարող է կնքվել նոտարական վավերացրած օֆերտայի և ակցեպտի փոխանակման միջոցով:
3) շինության վարձակալության պայմանագիրը կարող է կնքվել բանավոր, սակայն այս դեպքում կողմերի հարաբերությունները կկարգավորվեն բացառապես քաղաքացիական օրենսգրքի դրույթներով.
4) շինության դեպքում կնքվում է ոչ թե վարձակալության, այլ վարձույթի պայմանագիր, ինչը ենթակա է նոտարական վավերացման:

157. Նշվածներից որո՞նք են ակցեսոր պարտավորություններ՝
1) Կապալի պայմանագրով գումար վճարելու պարտավորությունը, եթե գումարը պետք է վճարվի աշխատանքները կատարելուց և արդյունքները հանձնելուց հետո միայն
2) առուվաճառքի պայմանագրի համաձայն ապրանքի գումարը վճարելու պարտավորությունը.
3) ***տուժանք վճարելու պարտավորությունը.***
4) վարձակալած գույքի համար վճարելու պարտավորությունը:

158. Նշվածներից ո՞ր տեղեկությունները պարտադիր չէ, որ նշվեն գրավի պայմանագրում՝
1) ***գրավի իրացման կարգը (դատարան դիմելու միջոցով, կամ արտադատարանական)***
2) կողմերի անունները (անվանումները) և բնակության (գտնվելու) վայրերը.
3) գրավով ապահովված պարտավորության էությունը, չափը և կատարման ժամկետները.
4) գրավի առարկան.

159. Ի՞նչ է մտնում ժառանգության զանգվածի մեջ
1) ***ժառանգության զանգվածի մեջ մտնում է ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները.***
2) ժառանգության զանգվածի մեջ մտնում է ալիմենտային պարտավորություններով իրավունքները և պարտականությունները.
3) ժառանգության զանգվածի մեջ մտնում է քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառած վնասը հատուցելու իրավունքը.
4) Ժառանգության զանգվածի մեջ մտնում են անձնական ոչ գույքային իրավունքները:

160. Ո՞վ չի կարող լինել ըստ կտակի ժառանգ՝
1) ժառանգության բացման օրը կենդանի քաղաքացիները.
2) ***ժառանգատուի կենդանության ժամանակ նախագծված և ժառանգությունը բացելուց հետո հիմնադրված իրավաբանական անձինք.***
3) ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները.
4) միջազգային կազմակերպությունները:

161. Ի՞նչ եղանակով կարող է քաղաքացին կտակ անել՝
1) կտակը կարող է արվել լիազորված անձի միջոցով՝ պայմանով որ լիազորագիրը պարունակում է էական պայմանները:
2) ***կտակը պետք է արվի անձամբ***
3) կտակը կարող է արվել լիազորված անձի միջոցով՝ պայմանով, որ լիազորագիրը անցել է նոտարական վավերացում:
4) կտակը կարող է արվել լիազորված անձի միջոցով՝ պայմանով, որ լիազորագիրը պարունակում է կտակի էական պայմանները և անցել է նոտարական վավերացում:

162. Ի՞նչ պայման է իրավասու դնել կտակարարը պայմանով կտակում
1) պայմանով կտակով, կտակարարը իրավասու է ժառանգների վրա պարտականություն դնել, որպեսզի վերջիններս իրենց հերթին՝ մահվան դեպքում ժառանգություն ստացված գույքը ժառանգեն կոնկրետ անձի.
2) պայմանով կտակով, կտակարարն իրավասու է ժառանգների վրա պարտականություն դնել, որպեսզի վերջիններս ժառանգված գույքը օգտագործեն որևէ կոնկրետ կերպ (օրինակ՝ անձը բնակարանը ժառանգում է որևէ համալսարանի, պայմանով, որ այդ բնակարանը պետք է վերածվի հանրակացարանի, և չի կարող այլ կերպ օգտագործվել).
3) պայմանով կտակով, կտակարան իրավասու է ժառանգների վրա, որպես ժառանգությունը ստանալու նախապայման, դնել ցանկացած պարտականություն, ինչպես օրինակ իր թշնամիներից վրեժ լուծել՝ ընդհուպ մինչև սպանություն.
4) ***կտակարարն իրավունք ունի ժառանգություն ստանալը պայմանավորել ժառանգի վարքագծի բնույթի վերաբերյալ որոշակի օրինաչափ պայմանով***

163. Ո՞ր դեպքում կտակարարն իրավունք ունի ժառանգությունից զրկել ըստ օրենքի ժառանգներին՝
1) կտակարարն իրավունք ունի ցանկացած անձի զրկել ըստ օրենքի ժառանգությունից, պայմանով, որ կտակում պետք է ներառի դրա համար հիմնավոր պատճառ:
2) ***կտակարարն իրավունք ունի առանց պատճառների բացատրության ժառանգությունից զրկել ըստ օրենքի ժառանգին, բացառությամբ, եթե այդ ժառանգը ժառանգության բացման օրը պարտադիր բաժնի իրավունք ունի.***
3) կտակարարն իրավունք ունի առանց պատճառների բացատրության պարտադիր բաժնի իրավունք չունեցող ցանկացած անձի զրկել ըստ օրենքի ժառանգությունից, իսկ պարտադիր բաժնի իրավունք ունեցող ըստ օրենքի ժառանգներին՝ հիմնավորված պատճառաբանությամբ:

4) կտակարարն իրավունք չունի զրկել որևէ ժառանգի ըստ օրենքի ժառանգման իրավունքից:

164. Ի՞նչ է փակ կտակը

1) Փակ կտակը, այն կտակն է, որի գոյության մասին նոտարն իրավունք չունի տեղեկացնել որևէ այլ անձի՝ ի հակադրություն բաց կտակի, որի գոյության մասին տեղեկությունները բաց են.
2) Փակ կտակը, այն կտակն է, որը պարունակում է միայն կտակը կազմելու ժամանակ ժառանգատուին սեփականության իրավունքով պատկանող գույքի մասին կարգադրություն.
3) ***փակ կտակը, այն կտակն է, որը կտակարարի ցանկությամբ նոտարը վավերացնում է առանց դրա բովանդակությանը ծանոթանալու.***
4) Փակ կտակը, այն կտակն է, որը պարունակում է միայն ժառանգատուին պատկանող անշարժ գույքին վերաբերող հանձնարարություն(ներ):

165. Ո՞ր դեպքում և ի՞նչ չափով կտակակատարն իրավունք ունի ստանալ վարձատրություն կամ ծախսերի հատուցում

1) Կտակակատարը՝ ժառանգությունը պահպանելու, այն կառավարելու և կտակը կատարելու հետևանքով կրած անհրաժեշտ ծախսերի համար ժառանգության հաշվին հատուցում ստանալու իրավունք ունի, սակայն իրավունք չունի վարձատրություն ստանալու:
2) ***կտակակատարը՝ ժառանգությունը պահպանելու, այն կառավարելու և կտակը կատարելու հետևանքով կրած անհրաժեշտ ծախսերի համար ժառանգության հաշվին հատուցում, ինչպես նաև՝ վարձատրություն ստանալու իրավունք ունի***
3) Կտակակատարը՝ ժառանգությունը պահպանելու, այն կառավարելու և կտակը կատարելու հետևանքով կրած անհրաժեշտ ծախսերի համար ժառանգության հաշվին հատուցում ստանալու իրավունք ունի, եթե միայն ծախսերի նախահաշիվը հաստատվել է նոտարի կամ դատարանի կողմից, ինչպես նաև վարձատրություն ստանալու իրավունք ունի, եթե ժառանգության հաշվին վարձատրություն ստանալու հնարավորությունը և վարձատրության չափը հաստատված է կտակով:
4) Կտակակատարը՝ ժառանգությունը պահպանելու, այն կառավարելու և կտակը կատարու հետևանքով կրած անհրաժեշտ ծախսերի համար ժառանգության հաշվին հատուցում, ինչպես նաև՝ վարձատրություն ստանալու իրավունք ունի, եթե միայն ծախսերի նախահաշիվը և վարձատրության չափը նոտարական վավերացում ստացած հայտարարության կամ պայմանագրի ձևով ստանում է բոլոր ժառանգների համաձայնությունը:

166. Երկրորդ հերթի ժառանգներ են

1) ժառանգատուի ծնողները.
2) ժառանգատուի ընկերները.
3) ***ժառանգատուի եղբոր երեխաները ներկայացման իրավունքով.***
4) ժառանգատուի մայրական կողմի պապը;

167. Եթե ժառանգության իրավունքի վկայագիր տալուց հետո ի հայտ է եկել այնպիսի գույք, որի համար վկայագիր չի տրվել, ապա
1) այդ գույքն անցնում է ժառանգության բացման վայրի համայնքի սեփականությանը
2) այդ գույքն անցնում է Հայաստանի Հանրապետության սեփականությանը
3) ***տրվում է ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր***
4) նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը վերացվում և տրվում է նոր վկայագիր

168. Ստորև թվարկվածներից ո՞րն է նկարագրում նոտարի կարգավիճակը ՀՀ-ում
1) ***Նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է Նոտարիատի մասին ՀՀ օրենքով նախատեսված գործողություններ և ծառայություններ***
2) Նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող պետական պաշտոնյա է, որը Հայաստանի Հանրապետության անունից, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է Նոտարիատի մասին ՀՀ օրենքով նախատեսված գործողություններ և ծառայություններ:
3) Նոտարը ՀՀ գործադիր իշխանության մասը կազմող պաշտոնատար անձ է, ում կարգավիճակի առանձնահատկությունները որոշվում են Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով, ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ նոտարական պալատի կանոնադրությամբ:
4) Նոտարը արդարադատություն իրականացնող մասնավոր անձ է:

169. Ո՞րն է նոտար նշանակվելու համար անհրաժեշտ նվազագույն կրթական ցենզը
1) Ֆորմալ կրթության պահանջ առկա չէ, անհրաժեշտ է միայն համապատասխան աշխատանքային փորձը և քննությունների դրական արդյունքները:
2) ***Իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում.***
3) Իրավաբանության մագիստրոսի որակավորում.
4) Իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան.

170. Ի՞նչ իրավական ռեժիմ է կիրառվում նոտարական գործողությունների նկատմամբ
1) ***Կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության ռեժիմը.***
2) Կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ոչ առևտրային գործունեության ռեժիմը, քանի որ նոտարը, նոտարական գործունեություն իրականացնելիս առաջնահերթ շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում.
3) Կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմնադրամներին յուրահատուկ ռեժիմ.
4) Կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պետական կառավարչական հիմնարկներին վերաբերվող իրավական ռեժիմը, քանի որ նոտարը նոտարական գործողություններ իրականացնում է ՀՀ անունից:

171.Ո՞վ է ընդունում նոտարական պալատի կանոնադրությունը

1) Նոտարական պալատի կանոնադրությունը հաստատում է արդարադատության նախարարը.
2) Նոտարական պալատի կանոնադրությունը ընդունում է ՀՀ կառավարությունը.
3) ***Նոտարական պալատի կանոնադրությունը ընդունում է նոտարական պալատը.***
4) Նոտարական պալատի կանոնադրությունը ընդունում է Լատինական նոտարիատի միջազգային միությունը:

172. Ստորև նշվածներից ո՞վ կարող է նշանակվել նոտարի օգնականի պաշտոնում

1) 25 տարեկան, արևելագիտության բնագավառում բակալավրի աստիճան ստացած չամուսնացած երիտասարդը, ով չունի դատվածություն.
2) ***30 տարեկան, իրավաբանության բակալավրի և իրավաբանության մագիստրոսի գիտական աստիճան ստացած կինը, ով չունի դատվածություն.***
3) նախկինում նոտար աշխատած, դատվածություն չունեցող, և 65 տարին լրանալու կապակցությամբ պաշտոնից ազատված անձը:
4) միջնակարգ դպրոցը գերազանց ավարտած, իրավաբանական ֆակուլտետի երրորդ կուրսում սովորող ուսանողը՝ համատեղության կարգով:

173. «Նոտար» բառը կամ դրա ածանցյալներն իրենց կամ իրենց գրասենյակների անվանման մեջ կարող են օգտագործել միայն

1) ***օրենքով սահմանված կարգով նշանակված նոտարները.***
2) նոտարի կողմից վստահված թարգմանիչները.
3) օրենքով սահմանված կարգով գրանցված թարգմանչական գրասենյակները.
4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի թույլտվությամբ՝ ցանկացած թարգմանչական գրասենյակ.

174. Նոտարական գործունեություն իրականացնող նոտարների հաստիքները կարող են կրճատվել

1) նոտարական պալատի եզրակացության հիման վրա, եթե վերջին հինգ տարիների ընթացքում տվյալ նոտարական տարածքում իրականացվող գործարքների քանակը կրճատվել է ավելի քան 50 տոկոսով.
2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի միջնորդությամբ, եթե նոտարը չի ապահովել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների կատարումը.
3) ***նոտարական գործունեություն իրականացնող նոտարների հաստիքները չեն կարող կրճատվել.***
4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի որոշմամբ, եթե անձը նշանակվել է նոտարի պաշտոնում՝ օրենքի պահանջների խախտմամբ.

175. Նոտարի բանկային հաշիվների վրա կարող է բռնագանձում տարածվել

1) ***միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով.***

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի որոշմամբ, եթե նոտարի նկատմամբ օրինական ուժի մեջ է մտել ազատությունից զրկող մեղադրական դատավճիռը, կամ նա օրենքով սահմանված կարգով ճանաչվել է պաշտոնական հանցագործություն կատարած անձ.
3) հարկային մարմնի որոշմամբ, եթե նոտարը խուսափել է հարկային պարտավորությունները կատարելուց.
4) նոտարական պալատի որոշմամբ, եթե նոտարը երեք ամիս անընդմեջ չի վճարել նոտարական պալատի անդամավճարը.

176. Նոտարն իր գործունեությունն իրականացնում է
1) նոտարական գրասենյակում և բանկերում.
2) ***նոտարական գրասենյակում, որը պետք է գտնվի նրա համար սահմանված նոտարական տարածքում.***
3) նոտարական գրասենյակում, որը պետք է գտնվի տվյալ համայնքի առավել բանուկ մասում.
4) նոտարական գրասենյակում, որը պետք է հարմարեցված լինի հաշմանդամների կարիքներին և լինի ոչ բնակելի նշանակության.

177. Նոտարը, մինչև պաշտոնի ստանձնելը, արդարադատության նախարարին և նոտարական պալատ է ներկայացնում
1) նոտարական գրասենյակի վարձակալության պայմանագիրը.
2) իր գործունեության ռիսկի ապահովագրության պայմանագիրը.
3) ***իր ստորագրության նմուշը.***
4) իր որոշած բանկում բանկային և դեպոզիտ հաշիվների, այդ թվում՝ արտարժույթով, պայմանագրերի պատճենները.

178. Նոտարն իր գործունեությանը զուգահեռ
1) կարող է զբաղեցնել այլ հաստիքային պաշտոն կամ կատարել այլ վարձատրվող աշխատանք, պայմանով, եթե դա չի խանգարում նոտարական գործունեությանը.
2) ***չի կարող զբաղեցնել այլ հաստիքային պաշտոն կամ կատարել այլ վարձատրվող աշխատանք, բացի մանկավարժական, գիտական կամ ստեղծագործական գործունեությունից.***
3) չի կարող զբաղեցնել այլ հաստիքային պաշտոն կամ կատարել այլ վարձատրվող աշխատանք, բացի մանկավարժական, գիտական կամ ստեղծագործական գործունեությունից՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի թույլտվությամբ.
4) կարող է զբաղվել միայն բարեգործական գործունեությամբ.

179. Նոտարն՝
1) իրավունք չունի ստանալու փոխհատուցում՝ նոտարական գործողությունների կատարման ընթացքում իր կատարած կամ կատարելիք տրանսպորտային, փոստային, հեռահաղորդակցության, բանկային, վճարահաշվարկային փաստաթղթերի պահպանման կամ ապացույցների ապահովման հետ կապված.

2) ***իրավունք ունի ստանալու փոխհատուցում՝ նոտարական գործողությունների կատարման ընթացքում իր կատարած կամ կատարելիք տրանսպորտային, փոստային, հեռահաղորդակցության, բանկային, վճարահաշվարկային փաստաթղթերի պահպանման կամ ապացույցների ապահովման հետ կապված, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ ծախսերի չափով.***
3) իրավունք ունի ստանալու փոխհատուցում միայն նոտարական գործողությունների կատարման ընթացքում իր կատարած տրանսպորտային ծախսերի հետ կապված.
4) իրավունք ունի ստանալու փոխհատուցում՝ նոտարական գործողությունների կատարման ընթացքում իր կատարած կամ կատարելիք տրանսպորտային, փոստային, հեռահաղորդակցության, բանկային, վճարահաշվարկային փաստաթղթերի պահպանման կամ ապացույցների ապահովման հետ կապված, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ ծախսերի չափով, եթե դրանց արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի տասնապատիկը.

180. Նոտարը պաշտոնից ազատվում է, եթե
1) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան հինգ ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.
2) նա խախտել է նոտարական էթիկայի կանոնների պահանջները.
3) մեկ տարվա ընթացքում երկու անգամ նա վավերացրել է գործարք կամ հաստատել է փաստաթուղթ, որը վավերացման կամ հաստատման պահին եղել է անվավեր.
4) ***նա դիմում է այդ մասին.***

181. Նախքան նոտարին պաշտոնից ազատելու մասին դատարան դիմելն արդարադատության նախարարը
1) պարտավոր է ստանալ նոտարական պալատի եզրակացությունը.
2) պետք է բացատրություն վերցնի այն անձից, որի շահերը շոշափում է նոտարի գործողությունը կամ անձից, որին մերժվել է նոտարական գործողություն կատարելը.
3) պետք է նոտարից պահանջի և ստանա նրա կնիքը.
4) ***պարտավոր է գրավոր բացատրություն վերցնել նոտարից.***

182. Նոտարի մոտ ստուգումներն իրականացվում են
1) դատախազության, ներքին գործերի, ազգային անվտանգության և իրավապահ այլ մարմինների նախաձեռնությամբ.
2) պետական մարմինների կամ նրանց պաշտոնատար անձանց նախաձեռնությամբ.
3) ***արդարադատության նախարարի կամ նոտարական պալատի նախաձեռնությամբ.***
4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողության տեսչության նախաձեռնությամբ.

183. Անձը, որի շահերը շոշափում է նոտարի գործողությունը կամ անձը, որին մերժվել է նոտարական գործողություն կատարելը, կարող է կատարված նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը բողոքարկել
1) կամ արդարադատության նախարարին, կամ նոտարական պալատ.

2) Հայաստանի Հանրապետության նախագահին.
3) դատախազություն, ներքին գործերի, ազգային անվտանգության և իրավապահ այլ մարմիններին.
4) ***դպրարան.***

184. Նոտարի մատուցած ծառայությունների համար վճարի չափը սահմանում է
1) ***նոտարը.***
2) կառավարությունը.
3) նոտարական պալատը.
4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը.

185. Նոտարը կարող է կտակի կամ դրա բովանդակության մասին օրենքով սահմանված կարգով տեղեկություններ տրամադրել
1) կտակարարի կենդանության օրոք՝ նոտարական գործողությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց.
2) կտակարարի կենդանության օրոք՝ դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննության մարմնին.
3) ***միայն կտակարարի մահից հետո.***
4) «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նոտարը պարտավոր է կտակարարի կենդանության օրոք տեղեկություններ տրամադրել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին.

186. Նոտարական գործողություններ կատարելու համար նոտարին կարող է դիմել
1) Հայաստանի Հանրապետության ցանկացած քաղաքացի.
2) ***ցանկացած անձ, անկախ նրա բնակության կամ գտնվելու վայրից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.***
3) Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.
4) ցանկացած անձ, եթե նա բնակվում է Հայաստանի Հանրապետության տարածքում.

187. Նոտարական գրասենյակից դուրս գործարք կատարելու դեպքում
1) ***նոտարը պարտավոր է վավերացման մակագրության մեջ և սեղանամատյանում (գրանցամատյանում) նշել նոտարական գործողության կատարման վայրը (հասցեն).***
2) նոտարը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողության տեսչությանը.
3) նոտարը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել նոտարական պալատ.
4) նոտարը պարտավոր է պահանջել գործարքի կողմից տեղեկանք այն մասին, որ նա չի կարող անձամբ ներկայանալ նոտարական գրասենյակ.

188. Նոտարի գործունեությունը կասեցված է համարվում

1) կասեցման մասին որոշումը (հրամանը) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության էլեկտրոնային կայքում հրապարակելու պահից.
2) կասեցման մասին որոշումը (հրամանը) նոտարական պալատ ուղարկելու պահից.
3) նոտարական գրասենյակը փակելու պահից.
4) ***կասեցման մասին որոշումը (հրամանը) նրան հանձնելու օրվան հաջորդող օրվանից.***

189. Գործունեությունը կասեցված նոտարի կնիքը
1) ***պահպանում է նոտարական պալատը՝ արդարադատության նախարարի սահմանած կարգով.***
2) պահպանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողության տեսչությունը.
3) պահպանում է տվյալ նոտարական տարածքի մեկ այլ նոտար՝ արդարադատության նախարարի սահմանած կարգով.
4) ոչնչացվում է.

190. Նոտարն իրավունք ունի բողոքարկել իր գործունեության կասեցման մասին որոշումը
1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին.
2) նոտարական պալատ.
3) ***դատական կարգով.***
4) կամ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կամ նոտարական պալատ.

191. Նոտարը կարող է պաշտոնից ազատվել, եթե
1) նրա վավերացրած գործարքը կամ նրա կողմից հաստատված փաստաթուղթը դատական կարգով ճանաչվել է անվավեր, որի հետևանքով դատական կարգով որոշվել է որպես վնասի հատուցում նոտարից բռնագանձել նվազագույն աշխատավարձի չորս հազարապատիկից ավելի գումար.
2) մեկ տարվա ընթացքում երկու անգամ նա վավերացրել է գործարք կամ հաստատել է փաստաթուղթ, որը վավերացման կամ հաստատման պահին եղել է անվավեր.
3) ***նա չարամտորեն խուսափել է հարկային պարտավորությունները կատարելուց.***
4) ավելի քան տասն օր անընդմեջ առանց հարգելի պատճառի չի ներկայացել աշխատանքի.

192. Նոտարի մոտ պահվող նոտարական ակտերը կարող են վերցվել
1) նոտարական պալատի գրավոր պահանջով.
2) ***արդարադատության նախարարի գրավոր պահանջով.***
3) այն անձի պահանջով, ում նկատմամբ կատարվել է նոտարական գործարքը.
4) ՀՀ վերահսկիչ պալատի պահանջով.

193. Այլ պետությունների տարածքում Հայաստանի Հանրապետության անունից նոտարական գործողություններ կատարում են՝

1) այդ պետության տարածքում գործող նոտարները.
2) այդ պետության տարածքում գործող այն անձինք, ովքեր ստացել են նոտարական գործունեություն իրականացնելու թույլտվություն.
3) Նոտարի որակավորման քննությունն անցած այն անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով գործուղվել են այլ պետություն՝ որպես նոտար աշխատելու նպատակով.
4) ***Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները.***

194. Նոտարական գործողություններ կատարելու համար
1) ***նոտարն իրավունք ունի անհրաժեշտ տեղեկություններ կամ փաստաթղթեր պահանջել կազմակերպություններից, պետական կամ համայնքային հիմնարկներից.***
2) նոտարն իրավունք ունի անհրաժեշտ տեղեկություններ կամ փաստաթղթեր պահանջել միայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից.
3) նոտարն իրավունք չունի անհրաժեշտ տեղեկություններ կամ փաստաթղթեր պահանջել կազմակերպություններից, պետական կամ համայնքային հիմնարկներից.
4) նոտարն իրավունք ունի անհրաժեշտ տեղեկություններ կամ փաստաթղթեր պահանջել միայն գործարքի կողմերից.

195. Նոտարն ունի
1) 30 օրացուցային օր տևողությամբ ամենամյա արձակուրդի իրավունք.
2) 25 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա արձակուրդի իրավունք.
3) ***30 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա արձակուրդի իրավունք.***
4) 25 օրացուցային օր տևողությամբ ամենամյա արձակուրդի իրավունք.

196. Նոտարը պարտավոր է
1) նոտարական գրասենյակի հասցեն փոխելիս այդ մասին տասն օր առաջ հայտնել արդարադատության նախարարություն և նոտարական պալատ.
2) մերժել նոտարական գործողության կատարումը, եթե առկա է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի բանավոր պահանջը.
3) նոտարական գործունեություն իրականացնելիս պարտադիր գանձել պետական տուրք.
4) ***օրենքով սահմանված կարգով գաղտնի պահել իր գործունեության առնչությամբ իրեն հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի.***

197. Եթե նոտարական կարգով վավերացման կամ հաստատման համար ներկայացված փաստաթղթում կիրառվել է օտարերկրյա պետության իրավունք կամ, եթե նոտարը կասկածներ ունի օտարերկրյա պետության իրավունքի կիրառման վերաբերյալ, ապա նա՝

1) այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ օրենքով սահմանված կարգով.
2) ***այդ մասին տեղեկացնում է դիմող կողմերին՝ կատարելով համապատասխան նշում վավերացման մակագրության մեջ.***
3) պարզաբանում է պահանջում նոտարական պալատից.
4) դիմում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ պարզաբանում ստանալու համար.

198. Նոտարի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցում
1) արդարադատության նախարարը՝ նոտարների մեծամասնության առաջարկով.
2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողության տեսչությունը՝ իր նախաձեռնությամբ կամ նոտարական պալատի առաջարկով.
3) ***արդարադատության նախարարը՝ իր նախաձեռնությամբ կամ նոտարական պալատի առաջարկով, ինչպես նաև նոտարական պալատը՝ իր նախաձեռնությամբ.***
4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողության տեսչությունը՝ քաղաքացիների նախաձեռնությամբ.

199. Կարգապահական վարույթ հարուցելու մասին
1) ***երկու օրվա ընթացքում հաղորդվում է նոտարին.***
2) հինգ օրվա ընթացքում հաղորդվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողության տեսչություն.
3) հինգ օրվա ընթացքում հաղորդվում է ոստիկանություն.
4) երկու օրվա ընթացքում հաղորդվում է նոտարական պալատ.

200. Կարգապահական վարույթի քննությունը պետք է ավարտվի
1) եթե նոտարական պալատը դիմում է ներկայացնում այդ մասին.
2) եթե նոտարների մեծամասնությունը դիմում է ներկայացնում այդ մասին.
3) եթե լրացել է նոտարի 60 տարին.
4) ***հարուցման օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում, ներառյալ՝ որոշման ընդունումը.***

201. Նոտարի նկատմամբ կարգապահական պատասխանատվության հիմքերն են՝
1) հաճախորդների հետ բարձր ձայնով խոսելը.
2) օրենքով չնախատեսված դեպքերում իր նոտարական տարածքից դուրս նոտարական գրասենյակ բացելը՝ բացառությամբ արդարադատության նախարարի թույլտվությամբ բանկերում գործարքներ կատարելը.
3) ***օրենքով չնախատեսված դեպքերում իր նոտարական տարածքից դուրս նոտարական գրասենյակ բացելը.***
4) Հեռախոսազանգերին չպատասխանելը.

202. Նոտարի նկատմամբ չի կարող նշանակվել հետևյալ կարգապահական տույժը

1) նախազգուշացում.
2) նկատողություն.
3) խիստ նկատողություն.
4) ***գործունեության կասեցում՝ մինչև մեկ տարի ժամկետով.***

203. Նոտարը ո՞ր նոտարական գործողությունները չի իրականացնում
1) վավերացնում է փաստաթղթերի պատճենների կամ դրանց քաղվածքների իսկությունը.
2) հաստատում է քաղաքացու՝ որոշակի վայրում գտնվելու փաստը.
3) ի պահ է ընդունում փաստաթղթեր.
4) ***հաստատում է ընտրության մասնակիցների ցուցակները.***

204. Նոտարը կամ նոտարական առանձին գործողություններ կատարող պաշտոնատար անձն իրավունք չունի նոտարական գործողություններ կատարել
1) ***իր, իր ամուսնու, իր կամ ամուսնու ծնողների, զավակների, եղբայրների, քույրերի, թոռների, պապի, տատի, ինչպես նաև տվյալ նոտարական գրասենյակի աշխատողների անվամբ և անունից.***
2) եթե լրացել է նոտարական գործողության կատարման համար դիմած անձի իննսուն տարին.
3) եթե նոտարական գործողության համար դիմած անձը բավարար սիրալիր չէ նոտարի նկատմամբ.
4) եթե անձը նոտարական գրասենյակ է ներկայացել սպորտային հագուստով.

205. Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառվող փաստաթղթերը, այդ թվում գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում պահանջող պայմանագրերը՝
1) հայերենին զուգահեռ կազմվում են այն լեզվով, որին տիրապետում են գործարքի կողմերը.
2) ***կազմվում են միայն հայերենով.***
3) կազմվում են կողմերի ցանկությամբ ցանկացած լեզվով.
4) կազմվում են ճապոներեն.

206. Միաժամանակ հայերեն և օտար լեզվով (լեզուներով) վավերացվող կամ հաստատվող փաստաթղթերի տեքստերը կարող են շարադրվել՝
1) իրար հետևից կամ իրար կողքի, պայմանով, որ իրար հետևից տեքստերի շարադրման դեպքում ներքևում զետեղվում է հայերենով տեքստը, իսկ իրար կողքի շարադրվելու դեպքում հայերենով տեքստը շարադրվում է աջ մասում.
2) գործարքի կողմերի ցանկությամբ՝ ցանկացած հաջորդականությամբ.
3) ***իրար հետևից կամ իրար կողքի, պայմանով, որ իրար հետևից տեքստերի շարադրման դեպքում վերևում զետեղվում է հայերենով տեքստը, իսկ իրար կողքի շարադրվելու դեպքում հայերենով տեքստը շարադրվում է ձախ մասում.***
4) նոտարի ցանկությամբ՝ ցանկացած հաջորդականությամբ.

207. Ֆիզիկական անձի ինքնությունը և գործունակությունը որոշվում է

1) նրա կողմից գրավոր ներկայացված ապացույցներից ելնելով.
2) ***անձը հաստատող փաստաթղթերով.***
3) նոտարի կողմից որոշվող փաստաթղթերով.
4) նրա կողմից ներկայացվող լիազորագրի տառացի մեկնաբանությամբ.

208. Մեկ թերթից ավելի ծավալ ունեցող փաստաթղթի թերթերը
1) յուրաքանչյուր էջի ներքևի ձախ հատվածում պետք է ստորագրված լինեն կողմերի կողմից.
2) պետք է յուրաքանչյուր էջի վրա դրված լինի նոտարի շտամպը.
3) ***պետք է լինեն կարված, համարակալված.***
4) պետք է ունենան ընթեռնելի ստորագրություն.

209. Եթե նոտարական գործողությանը մասնակցում է վկա կամ թարգմանիչ, ապա
1) պետք է լրիվ նշվեն նրա անձնագրի սերիան և տրման ամսաթիվը.
2) պետք է նշվի նրա ծննդավայրը.
3) Նոտարի ցանկությամբ կամ կողմերի պահանջով՝ պետք է լրիվ նշվեն նրա ազգանունը, անունն ու հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում՝ դրա առկայության դեպքում), ծննդյան տարին, ամիսը, օրը և բնակության վայրը.
4) ***պետք է լրիվ նշվեն նրա ազգանունը, անունն ու հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում՝ դրա առկայության դեպքում), ծննդյան տարին, ամիսը, օրը և բնակության վայրը.***

210. Նոտարի վավերացրած կամ հաստատած փաստաթղթի օրինակների քանակը
1) որոշում են դրանց վավերացման կամ հաստատման համար դիմած անձինք, սակայն անշարժ գույքի հետ կապված պայմանագրերը պետք է կազմվեն առնվազն չորս օրինակից, որոնցից մեկը ներկայացվում է պետական գրանցման.
2) որոշում է նոտարը, սակայն լիազորագրերը պետք է կազմվեն առնվազն երկու օրինակից.
3) ***որոշում են դրանց վավերացման կամ հաստատման համար դիմած անձինք, սակայն դրանք պետք է կազմվեն առնվազն երկու օրինակից, որոնցից մեկը պահվում է նոտարի մոտ.***
4) որոշում են դրանց վավերացման կամ հաստատման համար դիմած անձինք, սակայն դրանք պետք է կազմվեն առնվազն երեք օրինակից, որոնցից մեկը պահվում է նոտարի մոտ

211. Փաստաթղթի վավերացումից կամ հաստատումից հետո
1) փաստաթղթում ուղղումներ կարող է անել միայն նոտարը.
2) փաստաթղթում ուղղումներ կարող է անել միայն նոտարը, եթե առկա է գործարքի կողմի համաձայնությունը.
3) Ուղղումներ կարող է անել միայն արդարադատության նախարարը.
4) ***նոտարը կամ նոտարական գործողություններին մասնակցած անձինք իրավունք չունեն ուղղումներ կատարել վավերացված կամ հաստատված փաստաթղթում.***

212. Նոտարական գործողությունների ժամանակ որպես թարգմանիչ կարող է հանդես գալ՝
1) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից համապատասխան վկայական ունեցող անձը.
2) ***համապատասխան լեզվի տիրապետման մասին արդարադատության նախարարության կողմից որակավորման վկայական ունեցող այն անձը, որին վստահում է նոտարը.***
3) համապատասխան լեզվի տիրապետման մասին արդարադատության նախարարության կողմից որակավորման վկայական ունեցող այն անձը, որին կառաջադրի նոտարական պալատը.
4) գործարքի կողմի ցանկությամբ՝ ցանկացած անձ.

213. Որպես թարգմանիչ չեն կարող հանդես գալ
1) համրի նշանները հասկացող և խուլի հետ նշաններով բացատրվելու ունակ անձը.
2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակիցները.
3) ***նոտարական գործողությանը մասնակցող վկան.***
4) նոտարական գործարքի մասնակիցների ամուսինները, նրանց կամ նրանց ամուսինների ծնողները, զավակները, եղբայրները, քույրերը, թոռները, պապը կամ տատը.

214. Նոտարը պարտավոր է նախազգուշացնել թարգմանչին նոտարական գործողության գաղտնիության պահպանման անհրաժեշտության մասին՝
1) նոտարական գործողության կատարումից հետո.
2) ***մինչև նոտարական գործողության իրականացումը.***
3) նոտարը նման պարտավորություն չունի.
4) եթե կողմերը այդ մասին ցանկություն են հայտնում.

215. Վկան պետք է ներկա լինի
1) ***նոտարի կողմից նոտարական վավերացման ենթակա փաստաթղթի ընթերցման, փաստաթղթի ստորագրման և նոտարի կողմից դրա վավերացման ժամանակ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.***
2) նոտարի կողմից նոտարական վավերացման ենթակա փաստաթղթի ընթերցման, փաստաթղթի ստորագրման և նոտարի կողմից դրա վավերացման ժամանակ, եթե կողմերը ցանկություն են հայտնում, որ նա մասնակցի ամբողջ գործընթացին.
3) նոտարի կողմից նոտարական վավերացման ենթակա փաստաթղթի պատրաստման, ընթերցման, փաստաթղթի ստորագրման ժամանակ.
4) միայն այն փուլին, որը կորոշի նոտարը.

216. Որպես վկա կարող են հանդես գալ
1) այն անձինք, որոնց վստահում է գործարքի մասնակիցը.
2) այն անձինք, որոնց վստահում է նոտարը.
3) նոտարական գրասենյակի աշխատողները.

4) ***միայն լրիվ գործունակ անձինք.***

217. Որպես վկա չի կարող հանդես գալ
1) ***այն անձը, ում օգտին իրականացվում է նոտարական գործողությունը.***
2) այն անձը, ով վստահություն չի ներշնչում նոտարին.
3) այն անձը, ով նախկինում մեկ տարվա ընթացքում ավելի քան երկու անգամ հանդես է եկել որպես վկա.
4) այն անձը, ով բավարար չափով չի տիրապետում հայերենին,

218. Նոտարի պահանջով վկան պարտավոր է
1) երդվել , որ նա տվյալ գործարքի հետ կապված որևէ դրամական փոխհատուցում կողմից չի ստացել.
2) ***հայտարարություն ներկայացնել այն մասին, որ ինքը բավարարում է վկա հանդես գալը բացառող՝ օրենքով նախատեսված պահանջները.***
3) հայտարարություն ներկայացնել այն մասին, որ ինքը ստացել է գործարքի շահառուի համաձայնությունը.
4) ներկայացնել իր և գործարք կատարողի միջև ազգակցական կապի բացակայության մասին ապացույցներ.

219. Նոտարը լիազորված անձի լիազորությունների շրջանակը որոշելիս
1) կարող է հիմք ընդունել նաև կողմերի ներկայացրած ապացույցներն այն մասին, թե ինչ է նկատի ունեցել լիազորագիր տվողը.
2) ***պետք է ելնի միայն լիազորագրի բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից.***
3) կարող է հիմք ընդունել լիազորագիր տվողի կողմից գրավոր ներկայացված այլ փաստաթղթերը.
4) պետք է մեկնաբանի այն տարածականորեն.

220. Նոտարը
1) ***իրավունք չունի լիազորագրի մեկնաբանման միջոցով լրացուցիչ լիազորություններ տալ կամ լիազորություններից զրկել անձին.***
2) իրավունք ունի լիազորագիրը մեկնաբանել այնպես, որպեսզի ամբողջությամբ կատարվեն այն գործողությունները, որի կատարման համար, ըստ լիազորված անձի գրավոր հայտարարության, տրվել է լիազորագիրը.
3) իրավունք չունի լիազորագրի մեկնաբանման միջոցով լրացուցիչ լիազորություններ տալ կամ լիազորություններից զրկել անձին՝ բացառությամբ վերալիազորման կարգով տրվող լիազորագրերի, որի դեպքում նոտարն օգտագործում է տվյալ լիազորագրի բովանդակությանը մոտ իր մոտ առկա տիպային օրինակները.
4) իրավունք ունի լիազորագրերը մեկնաբանելու համար դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին.

221. Վավերացման մակագրությունների օրինակելի ձևերը
1) հաստատում է արդարադատության նախարարը՝ նոտարների ներկայացմամբ.

2) ***հաստատում է արդարադատության նախարարը՝ նոտարական պալատի ներկայացմամբ.***
3) հաստատում է նոտարական պալատը.
4) յուրաքանչյուր նոտար ինքն է իր համար սահմանում.

222. Նոտարական գործողությունների կատարումը կարող է հետաձգվել՝
1) փաստաթղթերը նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ուղարկելու դեպքում.
2) եթե նոտարը կասկածներ ունի, որ ներկայացված փաստաթղթերը կեղծ են.
3) եթե գործարքի կատարման համար անհրաժեշտ է ստանալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի թույլտվությունը.
4) ***ներկայացված փաստաթղթերը նոտարի կողմից մանրամասն ուսումնասիրելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում.***

223. Նոտարական գործողության կատարումը հետաձգելու կամ կասեցնելու մասին որոշման մեկ օրինակը՝
1) նոտարը պարտավոր է ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկել նոտարական պալատ.
2) նոտարը պարտավոր է հինգ օրվա ընթացքում ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին.
3) ***հանձնվում է նոտարական գործողությունների կատարման համար դիմած անձանց.***
4) ուղարկվում է նոտարական գործողությունների կատարման համար դիմած անձանց, եթե նրանք իրենց դիմումում նշել են այդ մասին.

224. Նոտարը նոտարական գործողության կատարումը մերժում է, եթե՝
1) ***դիմող անձը չի վճարում նոտարական գործողության կատարման համար նախատեսված պետական տուրքը կամ նոտարի մատուցած այլ ծառայությունների վճարը***
2) իր ներքին համոզմամբ նոտարը հիմքեր ունի ենթադրելու, որ գործարքը կողմի համար կարող է առաջացնել անբարենպաստ հետևանքներ.
3) եթե գործարքի կողմը թշնամի պետության քաղաքացի է.
4) եթե տվյալ պահին նոտարը, աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով, չի կարող վավերացնել գործարքը.

225. Նոտարական գործողությունների կատարման մերժման հիմքերի առկայության դեպքում՝
1) նոտարը կայացնում է մերժման գրավոր որոշում ցանկացած դեպքում.
2) ***դիմողի պահանջով նոտարը կայացնում է մերժման գրավոր որոշում, որում նշվում են մերժման իրավական հիմքերը և բողոքարկման կարգը.***
3) նոտարական պալատի պահանջով նոտարը կայացնում է մերժման գրավոր որոշում, որում նշվում են մերժման իրավական հիմքերը և բողոքարկման կարգը.

4) Հայաստանի Հանրապետության արդարադաության նախարարի պահանջով նոտարը կայացնում է մերժման գրավոր որոշում, որում նշվում են մերժման իրավական հիմքերը և բողոքարկման կարգը.

226. Նոտարական գործողության մերժման մասին նոտարը որոշում է կայացնում՝
1) տասն օրվա ընթացքում.
2) ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում.
3) ոչ ուշ քան երեք օրվա ընթացքում.
4) ***ոչ ուշ, քան նրան դիմելու օրը.***

227. Նոտարական ակտերի բնօրինակները պահպանվում են՝
1) քսան տարի նոտարի մոտ, իսկ այդ ժամկետի ավարտից հետո ուղարկվում են նոտարական պալատի արխիվի ծառայություն.
2) երեսուն տարի նոտարի մոտ, որից հետո ուղարկվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արխիվի բաժին.
3) ***դրանք վավերացրած նոտարի մոտ.***
4) դրանք վավերացրած նոտարի մոտ, եթե կողմերը դիմում չեն ներկայացրել փաստաթղթերի բնօրինակները ետ ստանալու վերաբերյալ.

228. Նոտարական գործողությունների կատարումից հետո՝
1) կողմերի համատեղ դիմումի համաձայն, նրանց տրամադրվում են փաստաթղթերի կրկնօրինակները կամ դրանցից քաղվածքներ, որոնք չունեն բնօրինակին հավասար իրավաբանական ուժ.
2) ***կողմերի դիմումի համաձայն, նրանց տրամադրվում են փաստաթղթերի կրկնօրինակները կամ դրանցից քաղվածքներ, որոնք ունեն բնօրինակին հավասար իրավաբանական ուժ.***
3) կողմերին փաստաթղթերի կրկնօրինակներ կամ դրանցից քաղվածքներ կարող են տրամադրվել միայն նոտարական պալատի թույլտվությամբ, որոնք բնօրինակին հավասար իրավաբանական ուժ կունենան, եթե հաստատվեն նաև նոտարական պալատի կնիքով.
4) կողմերին փաստաղթերի կրկնօրինակներ կամ դրանցից քաղվածքներ տալն արգելվում է, բացառությամբ նոտարական պալատի կողմից որոշված դեպքերի.

229. Նոտարական գործից փաստաթղթեր հանելն արգելվում է՝
1) ցանկացած դեպքում.
2) ***բացառությամբ՝ նոտարական գործում գտնվող փաստաթուղթն օրենքով սահմանված կարգով փորձաքննության ուղարկելու դեպքի, եթե դրա փորձաքննությունն անհնար է կատարել առանց փաստաթուղթն առանձնացնելու.***
3) բացառությամբ, եթե գործարքի կողմերը իրենց գրավոր համաձայնությամբ նոտարին ազատել են փաստաթղթերը պահպանելու պարտականությունից.
4) բացառությամբ, եթե նոտարը այդ մասին օրենքով սահմանված կարգով դիմել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին և ստացել թույլտվություն.

230. Նոտարական գործավարության կարգը սահմանում է՝
1) նոտարական պալատը.
2) նոտարների կողմից ստեղծված հանձնաժողովը.
3) ***արդարադատության նախարարը.***
4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողության տեսչությունը.

231. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անունից նոտարական գործողությունները կատարում են՝
1) տվյալ երկիր գործուղված նոտարները.
2) արտաքին գործերի նախարարի կողմից նշանակված մասնագետները.
3) նոտարական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձինք.
4) ***նրանց ղեկավարները.***

232. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները նոտարական գործողությունները կատարում են
1) ***Նոտարիատի մասին Հայաստանի Հանրապետության ն օրենքով և դրա համաձայն ընդունված իրավական այլ ակտերով սահմանված կարգով.***
2) Հյուպատոսական գործունեության մասին Հայաստանի Հանրապետության ն օրենքով և դրա համաձայն ընդունված իրավական այլ ակտերով սահմանված կարգով.
3) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի կողմից հաստատված հրահանգներով սահմանված կարգով.
4) նոտարական պալատի կողմից սահմանված կարգով.

233. Գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու վերաբերյալ գործարքները վավերացնում է՝
1) այն նոտարը, ում դիմում են կողմերը.
2) այն նոտարը, ով ավելի մոտ է գտնվում կողմերին.
3) հիմնական գործարքը վավերացրած նոտարը, եթե կողմերն այլ բան չեն որոշի.
4) ***հիմնական գործարքը վավերացրած նոտարը.***

234. Նոտարը վավերացնում է՝
1) ***գործունակ անձանց կտակները.***
2) այն կտակները, որոնցով գույքը կտակվում է կտակարարարի ժառանգներին.
3) միայն կտակակատարի նշանակումով կտակները.
4) միայն այն կտակները, որոնք հետագայում չեն վիճարկվի.

235. Կտակը վավերացնելիս կտակարարից՝
1) պետական տուրք չի գանձվում.
2) ***կտակվող գույքի նկատմամբ նրա սեփականության կամ այլ իրավունքը հաստատող ապացույցներ չեն պահանջվում.***

3) պահանջվում են կտակվող գույքի նկատմամբ նրա սեփականությունը կամ այլ իրավունքը հաստատող ապացույցներ.
4) ինքնությունը հաստատող փաստաթղթի ներկայացում չի պահամջվում.

236. Կտակը կարող է վերացվել կամ փոփոխվել կտակարարի կողմից՝
1) ***համապատասխան դիմում տալու կամ նոր կտակ կազմելու ձևով.***
2) համապատասխան հայտարարություն տալու ձևով.
3) համապատասխան հայտարարություն տալու և ժառանգին այդ մասին հայտնելու ձևով.
4) նոտարի կողմից որոշված ցանկացած ձևով.

237. Վերալիազորման իրավունքով տրված լիազորագիրը՝
1) կարող է կազմվել հասարակ գրավոր ձևով, բացառությամբ փաստաբանին տրվող լիազորագրի.
2) ***ենթակա է նոտարական վավերացման՝ օրենքով սահմանված կարգով.***
3) ենթակա է նոտարական վավերացման, եթե կողմերը նման ցանկություն են հայտնել.
4) ենթակա չէ նոտարական վավերացման.

238. Վերալիազորագրման իրավունքով տրված լիազորագիրը նոտարը վավերացնում է՝
1) եթե լիազորագիր տվողը տալիս է իր համաձայնությունը վերալիազորման համար.
2) եթե վերալիազորողը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է.
3) եթե վերալիազորողը բավարար չափով տիրապետում է հայերենին.
4) ***հիմնական լիազորագիրը ներկայացնելու դեպքում.***

239. Վերալիազորման իրավունքով տրված լիազորագրի գործողության ժամկետը՝
1) Չի կարող գերազանցել երկու տարին.
2) ***չի կարող գերազանցել հիմնական լիազորագրի գործողության ժամկետը.***
3) չի կարող գերազանցել հիմնական լիազորագրի գործողության ժամկետը, բացառությամբ արտասահմանում օգտագործելու համար տրված լիազորագրի.
4) չի կարող գերազանցել մեկ ամիսը.

240. Նոտարի կողմից վավերացվող կամ հաստատվող հայտարարությունների և (կամ) համաձայնությունների նկատմամբ կիրառվում են՝
1) կտակների վավերացման համար կիրառվող կարգն ու պայմանները.
2) լիազորագրերի համար սահմանված կարգն ու պայմանները, եթե կողմերն այլ բան չեն ցանկանում
3) ***լիազորագրերի համար սահմանված կարգն ու պայմանները.***
4) թարգմանությունների համար սահմանված կարգն ու պայմանները.

241. Ժառանգության զանգվածի մեջ մտնող այն գույքի պահպանությունը, որը կարող է շրջանառության մեջ գտնվել թույլտվությամբ կամ լիցենզիայով, նոտարն իրականացնում է՝
1) խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվության հիման վրա.

2) ժառանգների կողմից որոշված կարգով.
3) ***համապատասխան գույքի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով.***
4) համապատասխան գույքի մասին լիցենզավորման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով.

242. Եթե ժառանգության զանգվածում առկա է ոչ միայն պահպանելու, այլ նաև կառավարելու կարիք ունեցող գույք (տնտեսական ընկերակցության կամ ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի բաժնեմաս, արժեթղթեր, բացառիկ իրավունքներ և այլն), ապա նոտարը՝
1) դիմում է Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով՝ համապատասխան կառավարիչ նշանակելու համար.
2) ***որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, կնքում է այդ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր.***
3) որպես անհատ ձեռներեց՝ իր պատասխանատվությամբ իրականացնում է այդ գույքի կառավարումը.
4) կնքում է այդ գույքի ֆրանչայզինգի պայմանագիր համապատասխան որակավորում ունեցող մասնագետի հետ.

243. Կառավարիչը, ժառանգները կամ այլ անձինք, որոնց հանձնվել է ժառանգական զանգվածի մեջ մտնող գույք, նախազգուշացվում են՝
1) ***ժառանգական գույքը վատնելու, փչացնելու, թաքցնելու, օտարելու և ժառանգներին վնաս պատճառելու համար օրենքով նախատեսված պատասխանատվության մասին.***
2) նոտարական գաղտնիքը պահպանելու անհրաժեշտության մասին.
3) իրենց իրավասության սահմաններում գույքից առավել օգուտ ստանալու օրենքով սահմանված պահանջի մասին.
4) այլ անձանց ժառանգվող տարածք մուտք գործելը արգելելու օրենքով սահմանված պահանջի մասին.

244. Իրենց անցած ժառանգության գույքի արժեքի սահմաններում ժառանգները կրում են
1) սուբսիդիար պատասխանատվություն.
2) համիրավ պատասխանատվություն.
3) ռեգրեսիվ պատասխանատվություն.
4) ***համապարտ պատասխանատվություն.***

245. Ժառանգության ընդունման ժամկետը բաց թողած ժառանգը կարող է ժառանգությունն ընդունել՝
1) միայն դատական կարգով.
2) ժառանգությունն ընդունած մյուս բոլոր ժառանգների համաձայնությամբ, որը պետք է ներկայացվի գրավոր, պայմանով միայն, որ ժառանգը փոխհատուցել է ժառանգների կատարած ծախսերը.
3) ***ժառանգությունն ընդունած մյուս բոլոր ժառանգների համաձայնությամբ, որը պետք է ներկայացվի գրավոր.***

4) ժառանգությունն ընդունած մյուս բոլոր ժառանգների համաձայնությամբ, որը պետք է ներկայացվի փակ ծրարով.

246. Գույքը ժառանգության իրավունքով համայնքին անցնելու դեպքում ժառանգության իրավունքի վկայագիրը տրվում է՝
1) համայնքի ավագանուն.
2) համայնքի կողմից լիազորված անձին.
3) հավատարմագրային կառավարչին.
4) ***համայնքի ղեկավարին.***

247. Ըստ օրենքի կամ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրեր տալու դեպքում նոտարն ստուգում է՝
1) միայն ժառանգության զանգվածը.
2) ժառանգատուի մահվան փաստը, ժառանգության բացման ժամանակը և վայրը, ազգակցական հարաբերությունները կամ կտակի առկայությունը, ժառանգության զանգվածի կազմը, եթե կողմերը գրավոր համաձայնություն են ներկայացրել այդ մասին.
3) ժառանգատուի մահվան փաստը, ժառանգության բացման ժամանակը և վայրը, ազգակցական հարաբերությունները կամ կտակի առկայությունը, ժառանգության զանգվածի կազմը, եթե ժառանգատուի պարտատերերը բողոք չեն ներկայացրել.
4) ***ժառանգատուի մահվան փաստը, ժառանգության բացման ժամանակը և վայրը, ազգակցական հարաբերությունները կամ կտակի առկայությունը, ժառանգության զանգվածի կազմը.***

248. Մինչև, ըստ կտակի, ժառանգության իրավունքի վկայագիր տալը նոտարը պարզում է նաև
1) այն անձանց շրջանակը, ովքեր հավակնություններ ունեն ժառանգվող գույքի նկատմամբ.
2) ***ժառանգությունում պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձանց շրջանակը.***
3) ժառանգատուի ամուսնու իրավունքները և պարտականությունները.
4) ժառանգատուի հնարավոր պարտքերը.

249. Եթե մեկ կամ մի քանի ժառանգներ զրկված են օրինական ժառանգության իրավունք տվող ազգակցական կապի մասին ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, ապա նրանք կարող են ներառվել ժառանգության իրավունքի վկայագրում
1) ***մնացած բոլոր ժառանգների գրավոր համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատական կարգով.***
2) միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա.
3) պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձի գրավոր համաձայնությամբ.
4) մնացած բոլոր երեխաների գրավոր համաձայնությամբ.

250. Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է դրա մասնակիցների միջև բաժանվել

1) բոլոր շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա.
2) եթե նրանք նախապես ներկայացրել են բոլոր փաստաթղթերը.
3) միայն դատական կարգով.
4) ***նրանց համաձայնությամբ.***

251. Պատճենը պետք է համապատասխանի բնօրինակին
1) ***ուղագրության, կետադրության, բառերի կրճատման առումով***
2) ուղագրության, կետադրության առումով.
3) էջերի համարակալման առումով.
4) օգտագործված թղթի որակի առումով.

252. Օտար լեզվով կազմված փաստաթղթի պատճենը վավերացվում է միայն, եթե
1) գործարքին մասնակցում է թարգմանիչ.
2) ***նոտարը տիրապետում է տվյալ օտար լեզվին.***
3) եթե կողմը ցանկանում է դրա նոտարական վավերացումը նոտարի կողմից՝ առանց դրա բովանդակությանը ծանոթանալու.
4) եթե այդ փաստաթուղթը նոտարական կարգով հաստատված է.

253. Ֆիզիկական անձի կողմից տրված փաստաթղթի պատճենի իսկությունը նոտարը վավերացնում է այն դեպքում, եթե
1) անձը ցանկություն է հայտնել այդ փաստաթուղթը նոտարական կարգով վավերացնելու համար.
2) ***փաստաթղթի վրա եղած ֆիզիկական անձի ստորագրության իսկությունը վավերացրել է նոտարը.***
3) փաստաթղթի վրա եղած ֆիզիկական անձի ստորագրության իսկությունը վավերացրել է նոտարը և առկա է ապոստիլ.
4) փաստաթղթի վրա եղած ֆիզիկական անձի ստորագրության իսկությունը վավերացրել է դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարը.

254. Նոտարը, վավերացնելով փաստաթղթի պատճենի իսկությունը,
1) ***չի հավաստում կամ հաստատում փաստաթղթում շարադրված փաստերը, այլ սոսկ հաստատում է, որ փաստաթղթի պատճենը համապատասխանում է բնօրինակին.***
2) հաստատում է փաստաթղթում շարադրված փաստերը.
3) չի հավաստում կամ հաստատում փաստաթղթում շարադրված փաստերը, այլ սոսկ հաստատում է, որ փաստաթղթի պատճենը համապատասխանում է նոտարին ներկայացված փաստաթղթերին.
4) այն պահում է նոտարական գործում.

255. Նոտարը վավերացնում է այն բոլոր փաստաթղթերի վրա եղած ֆիզիկական անձանց ստորագրությունների իսկությունը
1) ***որոնք չունեն գործարքի բնույթ.***
2) որոնք ներկայացրել են կողմերը.
3) որոնք կազմված են գրական հայերենով.

4) որոնք կողմերի դիմումի հիման վրա ենթակա են պարտադիր նոտարական վավերացման.

256. Նոտարը, վավերացնելով ֆիզիկական անձի ստորագրության իսկությունը
1) ***չի հավաստում կամ հաստատում փաստաթղթում շարադրված փաստերը, այլ սոսկ հաստատում է, որ ստորագրությունը կատարել է որոշակի անձ.***
2) հաստատում է փաստաթղթում շարադրված փաստերը, և որ ստորագրությունը կատարել է որոշակի անձ.
3) դրանց տալիս է արտասահմանում օգտագործելու համար լիարժեք ապացուցողական ուժ.
4) հավաստում է դրանց համապատասխանությունը բնօրինակին.

257. Եթե նոտարը չի տիրապետում համապատասխան լեզուներին, փաստաթուղթը թարգմանում է
1) ***նոտարի կողմից վստահված թարգմանիչը, որի ստորագրության իսկությունը վավերացնում է նոտարը.***
2) այն անձը, որը բավարար չափով տիրապետում է տվյալ օտար լեզվին.
3) նոտարի կողմից հավատարմագրված թարգմանիչը, որի ստորագրության իսկությունը վավերացնում է նոտարը.
4) նոտարի օգնականը.

258. Նոտարը կարող է հաստատել, որ անձը ողջ է
1) եթե առկա է համապատասխան բժշկական տեղեկանք անձի ողջ լինելու վերաբերյալ.
2) եթե նա անձամբ, առանց կողմնակի օգնության,ներկայացել է նոտարին, կամ որի մոտ անձամբ գնացել է նոտարը.
3) եթե նա անձամբ ներկայացել է նոտարին, կամ դիմողը հավաստի ապացույցներ է ներկայացրել տվյալ անձի ողջ լինելու մասին.
4) ***եթե նա անձամբ ներկայացել է նոտարին, կամ որի մոտ անձամբ գնացել է նոտարը.***

259. Նոտարը հաստատում է քաղաքացու նույնությունը
1) անձնագրում պատկերված անձի հետ.
2) ***լուսանկարում պատկերված անձի հետ.***
3) խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից տրված տեղեկանքում պատկերված անձի հետ.
4) սեփականության վկայականում նշված անձի հետ.

260. Դիմումների, հայտարարությունների կամ այլ փաստաթղթերի փոխանցման հետ կապված ծախսերը վճարում է
1) այն անձը, ում փոխանցվում են դիմումները, հայտարարությունները կամ այլ փաստաթղթերը.
2) ***այն անձը, որի խնդրանքով դիմումը, հայտարարությունը կամ այլ փաստաթուղթը փոխանցվում է.***

3) կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած անձ.
4) նոտարը.

261. Դրամական գումարները կամ արժեթղթերը կարող են վերադարձվել դրանք դեպոզիտ հանձնած անձին
1) եթե լրացել է վաղեմության ժամկետը.
2) ***միայն այն անձի համաձայնությամբ, հօգուտ որի կատարվել է վճարը, կամ դատարանի վճռով.***
3) եթե նոտարը տեղափոխվում է այլ աշխատանքի.
4) նրա առաջին իսկ գրավոր պահանջի դեպքում.

262. Նոտարն իրավունք ունի ի պահ ընդունել
1) ***օրենքին չհակասող ցանկացած փաստաթուղթ, այդ թվում՝ էլեկտրոնային կրիչի վրա.***
2) միայն թղթային կրիչով ներկայացված փաստաթղթեր.
3) ցանկացած փաստաթուղթ, այդ թվում՝ օրենքին հակասող.
4) միայն իրավաբանական անձանց կողմից ներկայացված փաստաթղթեր.

263. Միևնույն անշարժ գույքի վերաբերյալ նշվածներից, որ իրավունքին է տրվում գրանցման առաջնահերթություն.
1) Գրավի իրավունք, որը ծագել է 2014թ. մարտի 15-ին կնքված գրավի պայմանագրից, և որը պետական գրանցման է ներկայացվել 2014թ. ապրիլի 10-ին:
2) ***Գրավի իրավունք, որը ծագել է 2014թ. մարտի 25-ին կնքված գրավի պայմանագրից, և որը պետական գրանցման է ներկայացվել 2014թ. ապրիլի 7-ին:***
3) Գրավի իրավունք, որը ծագել է 2014թ. մարտի 30-ին կնքված գրավի պայմանագրից, և որը պետական գրանման է ներկայացվել 2014թ. ապրիլի 12-ին:
4) Գրավի իրավունք, որը ծագել է 2014թ. մարտի 14-ին կնքված գրավի պայմանագրից, և որը պետական գրանցման է ներկայացվել 2014թ. ապրիլի 11-ին:

264. Գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների պետական գրանցման հիմք չէ.
1) ***ՀՀ առևտրային բանկի որոշումը,***
2) Քրեական հետապնդում իրականացնող մարմնի որոշումը,
3) Դատական ակտը,
4) Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմնի որոշումը:

265. Նշվածներից ո՞ր դեպքում է մերժման ենթակա անշարժ գույքի պետական միասնական կադաստրի կողմից տեղեկատվության տրամադրումը, տեղեկատվության գաղտնիության պահպանման հիմքով.
1) Ֆիզիկական անձը պահանջում է տրամադրել գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միասնական մատյանում գրառված տեղեկատվություն իրեն սեփականության իրավունքով չպատկանող որևէ անշարժ գույքի նկատմամբ,

2) Փաստաբանը պահանջում է տրամադրել կադաստրային գործում առկա առուվաճառքի պայմանագրի պատճենը, որում վերջինս կողմ չի հանդիսանում,
3) ***Հասարակական կազմակերպությունը պահանջում է կադաստրային գործում առկա գրավի պայմանագրի պատճենը, որում վերջինս կողմ չի հանդիսանում,***
4) Ֆիզիկական անձը պահանջում է տրամադրել օրենքով հանրամատչելի բնույթ ունեցող տեղեկություն:

266. Նշվածներից ո՞ր դեպքում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի կողմից տեղեկատվության տրամադրումը ենթակա է մերժման, տեղեկատվության սահմանափակ մատչելության հիմքով.
1) Իրավաբանական անձը պահանջում է տրամադրել իրեն սեփականության իրավունքով չպատկանող շինության կադաստրային արժեքի հաշվարկման համար հիմք հանդիսացող տեքստային և թվային տվյալները:
2) ***ՀՀ առևտրային բանկը պահանջում է կադաստրային գործում առկա առուվաճառքի պայմանագրի պատճենը, որում վերջին կողմ չի հանդիսանում,***
3) Ֆիզիկական անձը պահանջում է տրամադրել կադաստրային գործում առկա գրավի պայմանագրի պայմանները, տվյալ գրավի պայմանագրի կողմի հանդիսացող իրավաբանական անձի համաձայնությամբ,
4) Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պահանջում է տրամադրել կադաստրային գործում առկա գրավի պայմանագրի պատճենը, առանց տվյալ գրավի պայմանագրի կողմերից որևէ մեկի համաձայնության:

267. Նշվածներից ո՞ր դեպքում պետական գրանցման համար դիմումը կարող է մերժվել դիմումը իրավատիրոջ կողմից անձանմբ չներկայացվելու հիմքով.
1) Դիմում ներկայացնող անձը դիմումին կցում է իրավատիրոջ անունից նոտարի վավերացրած լիազորագիր,
2) Դիմումը ներկայացնող անձը հանդիսանում է իրավատեր իրավաբանական անձի գործադիր մարմնի միանձնյա ղեկավարը,
3) Դիմումը ներկայացնում է իրավատիրոջ խնամակալը,
4) ***Դիմումը ներկայացնում է իրավատիրոջ հարազատ եղբայրը:***

268. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականում չի նշվում.
1) Գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերը,
2) Անշարժ գույքի միավորի հասցեն,
3) Գրանցված իրավունքի սուբյեկի անունը,
4) ***Գրանցված իրավունքի սուբյեկտ իրավաբանական անձի գտնվելու վայրը:***

269. Նշվածներից ո՞ր դեպքում է պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր մերժել իրավունքի պետական գրանցումը.
1) ***Գրանցման է ներկայացվել նոտարի կողմից վավերացված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիրը,***
2) Գրանցման է ներկայացվել նոտարի կողմից չվավերացված շարժական գույքի գրավի պայմանագիրը,

3) Գրանցման է ներկայացվել նոտարի կողմից վավերացված հողամասի առուվաճառքի պայմանագիրը,
4) Գրանցման է ներկայացվել բնակարանի վարձակալության՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատված օրինակելի պայմանագիրն, առանց նոտարական վավերացման:

270. Նշվածներից ո՞րն իրավունքի պետական գրանցման մերժման հիմք չէ.
1) Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով որոշվել է պետական գրանցումը մերժել,
2) Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը գրանցման է ներկայացրել տվյալ պայմանագրի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի ամուսինը առանց լիազորագրի,
3) ***Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը գրանցման է ներկայացվել նոտարական վավերացման օրվանից սկսած քառասուներորդ աշխատանքային օրը,***
4) Գրանցման է ներկայացվել նոտարի կողմից չվավերացված շարժական գույքի գրավի պայմանագիր:

271. Ո՞ր դեպքերում պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալները չեն կարող ուղղվել գրանցող մարմնի պաշտոնատար անձի նախաձեռնությամբ.
1) Ուղղումը չի փոփոխում գույքի պատկանելությունը,
2) Ուղղումը չի փոփոխում գույքի նկատմամբ իրավունքների ծավալը,
3) ***Ուղղումը չի փոփոխում գույքի պատկանելությունը կամ դրա նկատմամբ իրավունքների ծավալը, սակայն հանգեցնում է գույքի կադաստրային արժեքի փոփոխության,***
4) Ուղղումը չի հանգեցնում գույքի մակերեսի չափերի փոփոխության:

272. Ո՞ր դեպքերում պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալները կարող են ուղղվել միայն շահագրգիռ անձի գրավոր համաձայնության առկայության դեպքում.
1) Ուղղումը չի հանգեցնում գույքի կադաստրային արժեքի փոփոխության,
2) Ուղղումը չի հանգեցնում գույքի մակերեսի փոփոխության,
3) ***Ուղղումը չի հանգեցնում գույքի կադաստրային արժեքի կամ մակերեսի փոփոխության, սակայն ուղղումը փոփոխում է գույքի նկատմամբ իրավունքների բնույթը,***
4) Ուղղումը չի փոփոխում գույքի պատկանելությունը:

273. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով շահագործման չհանձնված շինությունների նկատմամբ իրավունքների պետական գրանցման հիմք չէ.
1) Շինարարության թույլտվությունը,
2) ***Տվյալ շինության վերաբերյալ կնքված առուվաճառքի նախնական պայմանագրերը,***
3) Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը,
4) Տվյալ շինության ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը:

274. Եթե ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած և նրանց համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի նկատմամբ գրանցվել է ամուսիններից միայն մեկի սեփականության իրավունքը այն հիմքով, որ իրավունքի գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում որպես իրավատեր նշված է եղել միայն ամուսիններից մեկը, ապա.

1) ***նման գրանցման գործողության ընթացքում ամուսինների միայն համատեղ դիմումի հիման վրա այդ գույքի նկատմամբ կարող է գրանցվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը.***
2) նման գրանցման գործողության ընթացքում ամուսիններից գոնե մեկի դիմումի հիման վրա այդ գույքի նկատմամբ կարող է գրանցվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը,
3) ամուսինների համատեղ սեփականության իրավունքը չի կարող գրանցվել,
4) ամուսինների համատեղ սեփականության իրավունքը կարող է գրանցվել միայն դատական ակտի հիման վրա:

275. Ֆիզիկական անձանց ազգանվան փոփոխման դեպքում դրա հետ կապված գույքի նկատմամբ.

1) պահանջվում է կատարել գույքի նկատմամբ իրավունքների պետական նոր գրանցում շահագրգիռ անձի դիմումով,
2) ***գույքի նկատմամբ նոր գրանցում չի պահանջվում,***
3) պահանջվում է կատարել գույքի նկատմամբ իրավունքների պետական նոր գրանցում միայն օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով,
4) պահանջվում է կատարել գույքի նկատմամբ իրավունքների պետական նոր գրանցում միայն պետական լիազոր մարմնի որոշման հիման վրա:

276. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի հիման վրա գրանցման ենթակա չեն.

1) շարժական գույքի գրավը
2) նոտարի կողմից վավերացված անշարժ գույքի վարձակալության պայմանագրերը,
3) նոտարի կողմից չվավերացված շարժական գույքի լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքը,
4) ***նոտարի կողմից վավերացված արժեթղթերի առուվաճառքի պայմանագիրը:***

277. Շարժական գույքի նկատմամբ գրավի իրավունքի գրանցման դիմումին կից չի պահանջվում ներկայացնել.

1) ***դիմող իրավաբանական անձի ՀՎՀՀ-ի պատճենը,***
2) շարժական գույքի գրավի պայմանագիրը,
3) վճարի անդորրագիրը,
4) լիազորված անձի կողմից դիմումը ներկայացվելու դեպքում՝ լիազորությունները հավաստող փաստաթուղթը:

278. Շարժական գույքի գրավի պայմանագրից ծագող իրավունքի գրանցման դիմումը կարող է ներկայացվել.

1) ***շարժական գույքի գրավի պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում,***
2) շարժական գույքի գրավի պայմանագրի ստորագրման պահից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում,
3) շարժական գույքի գրավի պայմանագրի ստորագրման պահից սկսած՝ 30 օրացուցային օրվա ընթացքում,
4) կողմերի համաձայնությամբ ցանկացած ժամկետում:

279. Պետական գրանցման արդյունքում ստեղծվող հիմնական փաստաթղթեր չեն.
1) կադաստրային քարտեզը,
2) ***ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի բոլոր որոշումները,***
3) գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միասնական մատյանը,
4) անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար կազմված կադաստրային գործը:

280. գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունները չեն ընդգրկում.
1) սահմանափակման ժամկետը,
2) սահմանափակման տեսակը և բնույթը,
3) ***սահմանափակումը կիրառող իրավաբանական անձի մասնակիցների մասին տվյալները,***
4) սահմանափակման համար հիմք հանդիսացած փաստաթղթի անվանումը:

281. Նշվածներից որը գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մերժման հիմք չէ.
1) պետական գրանցման է ներկայացվել նոտարի կողմից վավերացված արժեթղթերի գրավի պայմանագիր,
2) ***պետական գրանցման է ներկայացվել նոտարի կողմից վավերացված անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, ստորագրված վարձակալի խնամակալի կողմից առանց նոտարական վավերացմամբ լիազորագրի,***
3) պետական գրանցման է ներկայացվել նոտարի կողմից վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր ստորագրած վաճառողի հարազատ եղբոր կողմից առանց նոտարական վավերացմամբ լիազորագրի,
4) նոտարական վավերացման է ներկայացվել տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր:

282. Օրենքով նախատեսված դեպքերում գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար գրավառուի կողմից սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը բովանդակող դիմումին կից չի պահանջվում ներկայացնել.

1) բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը,
2) գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը,
3) գրավառու իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը հիփոթեքի առարկան որպես սեփականություն գրավառուին հանձնելու մասին,
4) ***գրավատուի գրավոր համաձայնությունը:***

283. Ֆիզիկական անձի անվան փոփոխման հետ կապված տվյալ անձին պատկանող անշարժ գույքի իրավունքի փոփոխության համար համար հիմք է հանդիսանում.
1) ***անվան փոփոխության գրանցումն իրականացնող լիազոր մարմնի կողմից անձին տրված գրանցման վկայականը կամ նման գրանցումը հաստատող այլ փաստաթուղթը,***
2) անձի գրավոր հավաստումն, առ այն որ իր անունը փոփոխվել է,
3) անձի դիմումը անվան փոփոխության գրանցումն իրականացնող լիազոր մարմին իր անվան փոփոխության վերաբերյալ,
4) անձի առնվազն երկու հարազատների գրավոր հավաստումն անվան փոփոխության վերաբերյալ:

284. Շինության ոչնչացման հիմքով դրա նկատմամբ գրանցված սեփականության իրավունքի դադարման պետական գրանցումն իրականացվում է հողամասի սեփականտիրոջ կամ շինության նկատմամբ գրանցված սեփականության իրավունքի սուբյեկտի դիմումի հիման վրա, որին պետք է կցվի.
1) տեղեկանք հոգեբանական դիսպանսերից առա այն, որ դիմումատուն նշված հաստատությունում հաշվառված չէ,
2) տեղեկանք հարկային ծառայությունից պետության հանդեպ պարտավորությունների բացակայության վերաբերյալ,
3) ***չափագրում իրականացրած անձի եզրակացություն շինությունը քանդված (ոչնչացված) լինելու վերաբերյալ,***
4) տեղեկանք դատական դեպարտամենտից տվյալ շինությունը վեճի առարկա չհանդիսանալու վերաբերյալ:

285. Պետական գրանցման տարբեր սուբյեկտների պատկանող միավորների սահմանների միավորման պետական գրանցումը իրականացվում է.
1) ***այդ սուբյեկտների միջև կնքված պայմանագրի հիման վրա,***
2) համայնքի ղեկավարի համաձայնությամբ,
3) համայնքի ղեկավարի և այդ սուբյեկտների միջև կնքված պայմանագրի հիման վրա,
4) այդ սույբկետներից մեկի դիմումի հիման վրա:

286. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն շարժական գույքի գրանցման օբյեկտներ են.
1) անհատապես որոշվող հաստոցները,
2) անհատապես որոշվող սարքավորումների բաղկացուցիչ մասերը,

3) ***անհատապես որոշվող թռչող ապարատների նկատմամբ օրենքով սահմանված կարգով կնքված գրավի պայմանագրից ծագող իրավունքները,***
4) տրանսպորտային միջոցի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կնքված գրավի պայմանագրից ծագող իրավունքները:

287. Շարժական գույքի գրանցման սուբյեկտներն են.
1) ***Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտները.***
2) միայն Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերը,
3) Հայաստանի Հանրապետության դատական մարմինները.
4) Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարման մարմինները:

288. Հողամասի օգտագործման իրավունքը դադարելուց հետո այդ հողամասի վրա հողօգտագործողի կառուցած շենքի նկատմամբ սեփականության իրավունքը անցնում է հողօգտագործողին, եթե.
1) հողօգտագործողը նշված շենքը կառուցել է հողամասի սեփականատիրոջ գրավոր համաձայնությամբ,
2) ***այդպիսի պայման սահմանված է հողամասի սեփականատիրոջ և հողօգտագործողի միջև կնքված պայմանագրում,***
3) հողօգտագործողը նշված շենքի մի մասը սեփականության իրավունքով հանձնի հողամասի սեփականատիրոջը,
4) բոլոր դեպքերում նշված շենքի սեփականության իրավունքը անցնում է հողամասի սեփականատիրոջը:

289. Ինչ ձևով և կարգով է սահմանվում կամավոր սերվիտուտը.
1) սերվիտուտ պահանջող անձի և հարևան հողամասի սեփականատիրոջ միջև պարզ գրավոր կնքված համաձայնությամբ,
2) ***սերվիտուտ պահանջող անձի և հարևան հողամասի սեփականատիրոջ միջև նոտարական վավերացման ենթակա գրավոր կնքված համաձայնությամբ, որը ենթակա է պետական գրանցման,***
3) սերվիտուտ պահանջող անձի և հարևան հողամասի սեփականատիրոջ միջև բանավոր համաձայնությամբ,
4) Դատարանով:

290. Շենքի վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո Վարձակալը Վարձատուի առարկությունների բացակայությամբ շարունակում է օգտվել շենքից: Ի՞նչ կարգով Վարձատուն կարող է միակողմանի հրաժարվել պայմանագրից.
1) վարձատուի կողմից պայմանագրից միակողմանի հրաժավելը արգելվում է.
2) ***վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագրից, այդ մասին Վարձակալին երեք ամիս առաջ տեղեկացնելով,***
3) վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագրից, այդ մասին Վարձակալին մեկ ամիս առաջ տեղեկացնելով,

4) վարձատուն իրավունք ունի միակողմանի հրաժարվել պայմանագրից միայն դատարանի միջոցով:

291. Երկու ընկերությունների միջև կնքվել է շինության վարձակալության պայմանագիր անորոշ ժամկետով: Պայմանագրով նախատեսված է, որ կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանի լուծել պայմանագիրը, այդ մասին մյուս կողմին ութ ամիս առաջ տեղեկացնելով: Ի՞նչ կարգով Վարձակալ իրավաբանական անձը իրավունք ունի միակողմանի հրաժարվել պայմանագրից.

1) ***վարձատուին այդ մասին ութ ամիս առաջ տեղեկացնելու միջոցով,***
2) վարձատուին այդ մասին երեք ամիս առաջ տեղեկացնելու միջոցով,
3) վարձատուին այդ մասին մեկ ամիս առաջ տեղեկացնելու միջոցով,
4) միայն դատական կարգով:

292. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի վարձակալ ֆիզիկական անձը մահացել է, ի՞նչ կարգով է վարձակալության պայմանագիրը շարունակում գործել.

1) վարձակալության պայմանագիրը բոլոր դեպքերում լուծվում է վարձակալի մահվամբ,
2) ***վարձակալի հետ մշտապես բնակվող քաղաքացիների ընդհանուր գրավոր համաձայնությամբ վարձակալ է դառնում նրանցից մեկը և պայմանագիրը շարունակում է գործել նույն պայմաններով,***
3) պայմանագիրը շարունակում է գործել նույն պայմաններով, իսկ վարձակալ է դառնում նախկին վարձակալի հետ մշտապես բնակվող քաղաքացիներից մեկը, առանց որևէ մեկի համաձայնության,
4) պայմանագիրը շարունակում է գործել, իսկ վարձակալ է դառնում վարձատուի կողմից նշանակված՝ նախկին վարձակալի հետ մշտապես բնակվող քաղաքացիներից մեկը:

293. Բնակարանի վարձակալության պայմանագիրը կնքվել է երեք տարի ժամկետով: Ի՞նչ կարգով Վարձակալը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծել պայմանագիրը.

1) ***ցանկացած ժամանակ այդ մասին երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին,***
2) միայն դատական կարգով,
3) վարձատուն պայմանագիրը վաղաժամկետ լուծելու իրավունք չունի.
4) ցանկացած ժամանակ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին:

294. Ինչի՞ իրավունք չունի վարձակալը վարձակալության հանձնված գույքի թերություններ հայտնաբերելու դեպքում.

1) ***առանց վարձատուին նախապես տեղեկացնելու՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը,***
2) պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը,
3) վարձատուից պահանջելու անհատույց վերացնելու գույքի թերությունները,
4) վարձատուից պահանջելու համաչափորեն իջեցնելու վարձավճարը:

295. Վարձակալության պայմանագիրը կնքելիս վարձատուն վարձակալին չի նախազգուշացրել վարձակալության հանձնվող շինության գրավի իրավունքի վերաբերյալ. այս դեպքում ի՞նչ իրավունք ունի վարձակալը.

1) լուծել պայմանագիրը և պահանջել վերադարձնել մինչ լուծման պահը վճարված վարձավճարները ամբողջությամբ,
2) պահանջել անվավեր ճանաչել գրավի իրավունքը,
3) ***պահանջել նվազեցնել վարձավճարը,***
4) վարձակալը որևէ իրավունք չունի,

296. Ո՞ր դեպքում է վարձակալության պայմանագիրը համարվում չկնքված.

1) ***շինության վարձակալության պայմանագրում վարձավճարի չափը չի նախատեսվել,***
2) շենքի վարձակալության պայմանագրում վարձավճարը սահմանված է շենքի տարածքի միավորի ցուցանիշով:
3) տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրում վարձավճարի չափը չի նախատեսվել,
4) բնակելի տարածության վարձակալության պայմանագրով նախատեսվել է վարձակալության վճարի չափի միակողմանի փոփոխման հնարավորություն:

297. Բնակելի տարածության ենթավարձակալության համար պահանջվում է.

1) միայն վարձակալության պայմանագրով վարձակալի համաձայնությունը,
2) ***վարձակալության պայմանագրով վարձատուի համաձայնությունը,***
3) վարձակալության պայմանագրով վարձակալի և վերջինի հետ մշտապես բնակվող քաղաքացիների գրավոր համաձայնությունը,
4) դատարանի որոշում:

298. Ո՞վ է իրականացնում արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում

1) Միայն Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը
2) ***միայն դատարանները***
3) միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
4) միայն դատարանները և արդարադատության նախարարությունը

299. Հեղինակի գույքային իրավունքները գործում են՝

1) մինչև հեղինակի մահը
2) ***հեղինակի կյանքի ընթացքում և շարունակում են գործել նրա մահից հետո 70 տարի***
3) ստեղծագործության ստեղծման պահից քսան տարվա ընթացքում
4) ստեղծագործության առաջին հրապարակային կատարման պահից տասնհինգ տարվա ընթացքում

300. Բաժնետիրական ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանում է՝

1) գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված ընթացակարգերից որևէ մեկով

2) ընկերության տնօրենի որոշմամբ
3) ***խորհուրդն իր որոշմամբ***
4) անկախ աուդիտորական եզրակացության հիման վրա

301. Ե՞րբ է առաջանում ժառանգության տրանսմիսիա.
1) եթե ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգության հրավիրված ժառանգը մահանում է մինչև ժառանգության բացումը.
2) ***եթե ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգության հրավիրված ժառանգը մահանում է ժառանգության բացումից հետո, չհասցնելով այն ընդունել.***
3) եթե ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգության հրավիրված ժառանգը մահանում է ժառանգության բացումից հետո, չհասցնելով այն ձևակերպել.
4) եթե ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգության հրավիրված ժառանգը չի ընդունում ժառանգությունը.

302. Ժառանգության զանգվածի մեջ չի մտնում
1) փոխառության պայմանագրից բխող պահանջի իրավունքը, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով.
2) ***նվիրառուի, ում նվիրատվության պայմանագրով խոստացվել է նվեր, իրավունքները, եթե այլ բան նախատեսված չէ նվիրատվության պայմանագրով.***
3) ավանդատուի պահանջի իրավունքը բանկային ավանդի պայմանագրով.
4) կապալառուի պահանջի իրավունքը պատվիրատուի նկատմամբ.

303. Ժառանգությունը բաժանելու դեպքում ժառանգատուին պատկանող բնակելի տան (բնակարանի) նկատմամբ նախապատվության իրավունք ունեն.
1) ժառանգատուի երեխաները.
2) բնակելի տանը ապրող ժառանգները.
3) ***բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող ժառանգը.***
4) ժառանգատուի ամուսինը.

304. Գույքի գրավատու կարող է լինել
1) ***միայն սեփականատերը.***
2) միայն սեփականատերը և կառուցապատման իրավունք ունեցող անձը.
3) սեփականատերը, վարձակալը և կառուցապատման իրավունք ունեցող անձը.
4) սեփականատերը և վարձակալը:

305. Գրավի պայմանագիրն անվավեր է, եթե նշված չեն.
1) ***կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը, չափն ու կատարման ժամկետը.***
2) կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը, գրավի առարկան տնօրինելու սահմանափակումը.

3) կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը, չափն ու կատարման ժամկետը, հաջորդող գրավի կնքման սահմանափակումը.
4) կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը, գրավի առարկան տնօրինելու և հաջորդող գրավի կնքման սահմանափակումները.

306. Հիփոթեք է համարվում.
1) ***անշարժ գույքի գրավը, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի գրավը.***
2) անշարժ գույքի, հողամասի կառուցապատման իրավունքի և վարձակալության իրավունքի գրավը.
3) միայն անշարժ գույքի գրավը.
4) անշարժ գույքի, հողամասի կառուցապատման իրավունքի, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքների գրավը.

307. Ոչ փաստաթղթային ձևով թողարկված արժեթղթերի գրավի իրավունքը ծագում է
1) պայմանագիրը ստորագրելու պահից.
2) պայմանագրի նոտարական վավերացման պահից.
3) ***իրավունքների գրառում կատարող անձի մոտ համապատասխան գրառում կատարելու պահից.***
4) գրավի էական պայմանների շուրջ համաձայնության գալու պահից:

308. Թույլատրվում է արդյո՞ք ոչ փաստաթղթային արժեթղթերի հաջորդող գրավը.
1) չի թույլատրվում.
2) թույլատրվում է ցանկացած դեպքում.
3) ***թույլատրվում է, եթե այն արգելված չէ այդ արժեթղթերի թողարկման պայմաններով.***
4) չի թույլատրվում, բացառությամբ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված դեպքերի.

309. Ո՞ր դեպքում գրավատուն իրավունք ունի օտարել գրավի առարկան.
1) ***իրավունք ունի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով.***
2) իրավունք չունի.
3) իրավունք ունի, անկախ օրենքով կամ պայմանագրով նախատեսված սահմանափակումից.
4) միայն նշված իրավունքը պայմանագրով նախատեսված լինելու դեպքում:

310. Իրավունք ունի՞ գրավառուն գրավի պայմանագրից բխող իր իրավունքները փոխանցել այլ անձի.
1) իրավունք ունի՝ անկախ գրավով ապահովված հիմնական պարտավորությամբ պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքը զիջելու.
2) իրավունք չունի.

3) ***իրավունք ունի, եթե զիջել է նաև գրավով ապահովված հիմնական պարտավորությամբ պարտապանի նկատմամբ պահանջի իրավունքը.***
4) իրավունք ունի, եթե դա ուղղակիորեն նախատեսված է պայմանագրով:

311. Գրավով ապահովված պարտավորությամբ պարտքն այլ անձի փոխանցելիս գրավը դադարում է
1) ցանկացած դեպքում.
2) չի դադարում.
3) ***եթե գրավատուն պարտատիրոջը համաձայնություն չի տվել պատասխանատվություն կրելու նոր պարտապանի փոխարեն.***
4) եթե գրավատուն սկզբնական պարտապանին համաձայնություն չի տվել պատասխանատվություն կրելու նոր պարտապանի փոխարեն.

312. Արտադատական կարգով բռնագանձում տարածելու դեպքում, ե՞րբ կարող է գրավառուն գրավատուի անունից իրացնել գրավի առարկան.
1) չի կարող իրացնել.
2) պարտավորության կատարման ժամկետը լրանալու պահից 1 ամիս հետո.
3) պարտավորության կատարման ժամկետը լրանալու պահից 2 ամիս հետո.
4) ***բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո.***

313. Իրավունք ունի՞ գրավառուն առանց դատարան դիմելու իրացնել գրավի առարկան.
1) իրավունք չունի.
2) իրավունք ունի, միայն նոտարական կարգով վավերացված գրավի պայմանագրով սահմանված լինելու դեպքում.
3) ***իրավունք ունի, եթե առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն.***
4) իրավունք ունի, միայն գրավի իրավունքի պետական գրանցման դեպքում:

314. Իրավունք ունի՞ գրավատունն օգտագործել գրավի առարկան.
1) ***իրավունք չունի.***
2) իրավունք ունի միայն օրենքով նախատեսված դեպքում.
3) իրավունք ունի օրենքով և պայմանագրով նախատեսված դեպքում.
4) ցանկացած դեպքում իրավունք ունի.

315. Գրավական է համարվում
1) անշարժ գույքի գրավը.
2) կոշտ գրավը.
3) ***այն գրավը, որի առարկան անցնում է գրավառուի տիրապետմանը.***
4) այն գրավը, որի առարկան մնում է գրավատուի տիրապետման տակ.

316. Գրավի դադարման հիմք չէ
1) գրավով ապահովված պարտավորության դադարումը.

2) գրավ դրված գույքը սույն օրենսգրքով սահմանված կարգով իրացվելու (վաճառվելու) դեպքում.
3) գրավ դրված գույքի ոչնչացման կամ գրավ դրված իրավունքը դադարելու դեպքում, եթե գրավատուն ողջամիտ ժամկետում չի վերականգնել գրավի առարկան կամ այն փոխարինել այլ հավասարարժեք գույքով.
4) ***գրավ դրված գույքի ոչնչացման կամ գրավ դրված իրավունքը դադարելու դեպքում, եթե գրավատուն ողջամիտ ժամկետում վերականգնել է գրավի առարկան կամ այն փոխարինել այլ հավասարարժեք գույքով.***

317. Շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ է հանդիսանում
1) ***գրավատուի մոտ թողնված ապրանքների գրավը՝ գրավատուին իրավունք վերապահելով փոխել գրավ դրված գույքի կազմը և բնական ձևը, պայմանով, որ դրանց ընդհանուր արժեքը չնվազի գրավի մասին պայմանագրում նշվածից.***
2) գրավառուին հանձնված ապրանքների գրավը՝ գրավատուին իրավունք վերապահելով փոխել գրավ դրված գույքի կազմը և բնական ձևը, պայմանով, որ դրանց ընդհանուր արժեքը չնվազի գրավի մասին պայմանագրում նշվածից.
3) գրավատուի մոտ թողնված ապրանքների գրավը՝ գրավատուին իրավունք վերապահելով փոխել գրավ դրված գույքի կազմը և բնական ձևը, անկախ գույքի ընդհանուր արժեքի փոփոխությունից.
4) գրավառուին հանձնված ապրանքների գրավը՝ գրավառուին իրավունք վերապահելով փոխել գրավ դրված գույքի կազմը և բնական ձևը, պայմանով, որ դրանց ընդհանուր արժեքը չնվազի գրավի մասին պայմանագրում նշվածից:

318. Հիփոթեքի առարկան պայմանագրում որոշվում է
1) ***անվանման, գտնվելու վայրի նշումով և այդ առարկայի նույնացման համար բավարար նկարագրությամբ.***
2) լուսանկարով.
3) անվանման նշումով և այդ առարկայի նույնացման համար բավարար նկարագրությամբ.
4) գտնվելու վայրի նշումով և այդ առարկայի նույնացման համար բավարար նկարագրությամբ.

319. Հիփոթեքի պայմանագիրը կարող է լինել
1) միակողմ.
2) միակողմ, երկկողմ և բազմակողմ.
3) ***երկկողմ և բազմակողմ.***
4) միայն բազմակողմ.

320. Իրավունք ունի՞ գրավատուն առանց գրավառուի համաձայնության հիփոթեքի պայմանագրով գրավ դրված հողամասում կառուցելու շենքեր և շինություններ.
1) իրավունք չունի.
2) իրավունք ունի ցանկացած դեպքում.
3) ***իրավունքի ունի, եթե այլ բան նախատեսված չէ հիփոթեքի պայմանագրով.***

4) իրավունք ունի միայն գրավառուի համաձայնությամբ.

321. Պետության սեփականությունը հանդիսացող ո՞ր անշարժ գույքի հիփոթեքը չի թույլատրվում.
1) հանրակացարանների.
2) ամառանոցների.
3) այգետնակների.
4) ***անհատական բնակելի տների և բնակարանների.***

322. Ժառանգության զանգվածի մեջ չի մտնում
1) փոխառության պայմանագրից բխող պահանջի իրավունքը.
2) գնորդից՝ ապրանքի գնի վճարման պահանջի իրավունքը.
3) ***առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունքը.***
4) վարկային պայմանագրից բխող պահանջի իրավունքը.

323. Ժառանգության բացման ժամանակը
1) ժառանգատուի մահվանը հաջորդող 5-րդ օրն է.
2) ժառանգատուի մահվանը հաջորդող 6-րդ օրն է.
3) ժառանգատուի մահվանը հաջորդող 7-րդ օրն է.
4) ***ժառանգատուի մահվան օրն է.***

324. Եթե նույն օրը մահացել են այն անձինք, ովքեր իրավունք ունեին ժառանգել մեկը մյուսից հետո.
1) ***նրանք ճանաչվում են մահացած միաժամանակ.***
2) առաջինը համարվում է մահացած այն անձը, ում մահը ՔԿԱԳ մարմիններում գրանցվել է առաջինը.
3) առաջինը համարվում է մահացած այն անձը, ում մահը վրա է հասել առաջինը՝ ըստ ժամային չափանիշի.
4) առաջինը համարվում է մահացած այն անձը, որի դիակը առաջինն է հայտնաբերվել.

325. Ժառանգության բացման վայրը
1) ժառանգատուի հաշվառման վայրն է.
2) ***ժառանգատուի բնակության վերջին վայրն է.***
3) ժառանգատուի վերջին հաշվառման վայրն է.
4) ժառանգատուին պատկանող անշարժ գույքի գտնվելու վայրն է՝ անկախ նրա բնակության վայրից.

326. Եթե ժառանգատուի բնակության վերջին վայրն անհայտ է, ժառանգության բացման վայր է համարվում՝
1) ժառանգատուի վերջին հաշվառման վայրը.
2) ժառանգատուի առավել արժեքավոր շարժական գույքի գտնվելու վայրը՝ անկախ անշարժ գույքի առկայությունից.

3) ***ժառանգության զանգվածի մեջ մտնող անշարժ գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի, իսկ անշարժ գույքի բացակայության դեպքում՝ շարժական գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի գտնվելու վայրը.***
4) անշարժ գույքից որևէ մեկի գտնվելու վայրը՝ ժառանգի հայեցողությամբ.

327. Ըստ օրենքի ժառանգ կարող են լինել
1) ***ա. ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները.***
2) ժառանգության բացման օրը կենդանի քաղաքացիները և ժառանգության բացման օրը գոյություն ունեցող իրավաբանական անձինք.
3) ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները, ժառանգության բացման օրը գոյություն ունեցող իրավաբանական անձինք.
4) ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները, ժառանգության բացման օրը գոյություն ունեցող իրավաբանական անձինք, Հայաստանի Հնարապետությունը և համայնքները.

328. Հայաստանի Հանրապետությունը կարող է ժառանգ լինել
1) միայն ըստ օրենքի.
2) ըստ օրենքի և ըստ կտակի.
3) ***միայն ըստ կտակի.***
4) միայն անժառանգ գույքի նկատմամբ.

329. Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելու պահանջով դատարան դիմելու իրավունք ունեն
1) խանամակալության և հոգաբարձության մարմինները.
2) իրավապահ մարմինները.
3) ***այն անձինք, որոնց համար նման մեկուսացումն առաջացնում է ժառանգության հետ կապված գույքային հետևանքներ.***
4) ըստ օրենքի բոլոր ժառանգները՝ անկախ իրենց համար գույքային հետևանքներից.

330. Ըստ կտակի ժառանգությունից չի մեկուսացվում այն անձը
1) ով դիտավորյալ խոչընդոտել է ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը.
2) դիտավորյալ կյանքից զրկել է ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից որևէ մեկին.
3) ***ով մահափորձ է կատարել ժառանգատուի դեմ, սակայն կտակը կազմվել է մահափորձ կատարելուց հետո.***
4) ով մահափորձ է կատարել ժառանգատուի դեմ, իսկ կտակը կազմվել է մահափորձ կատարելուց առաջ.

331. Կտակ է համարվում.
1) ***քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը.***
2) նվիրատվությունը.
3) քաղաքացու մահվան դեպքում և մինչև մահը նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը.
4) մինչև մահը քաղաքացուն պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը.

332. Կտակը կարող է պարունակել
1) մինչև երկու անձի կարգադրություններ.
2) անսահմանափակ թվով անձանց կամքի արտահայտություն.
3) մինչև երկու անձի կարգադրություններ՝ ամուսնության ընթացքում ձեռքբերված համատեղ սեփականություն հանդիսացող գույքի կտակման դեպքում.
4) ***միայն մեկ անձի կարգադրություններ.***

333. Կարող է արդյո՞ք սահմանափակվել կտակի ազատությունը
1) չի կարող սահմանափակվել.
2) ***սահմանափակվում է միայն ժառանգության պարտադիր բաժնի կանոններով.***
3) սահմանափակվում է միայն երեխաների առկայության պարագայում.
4) սահմանափակվում է միայն երեխաների և ամուսնու առկայության պարագայում.

334. Պարտադիր բաժնի դեպքում ժառանգը ստանում է
1) ***այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում.***
2) այն բաժինը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում.
3) այն բաժնի առնվազն մեկ երրորդը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում.
4) ամբողջ ժառանգական գույքի կեսը.

335. Կտակարարն իրավունք չունի իր կողմից նշանակված ժառանգների վրա կտակով պարտականություն դնել
1) թույլատրել այլ անձի ժառանգական գույք հանդիսացող բնակարանում բնակվել.
2) այլ անձի համար գույք ձեռքբերել և հանձնել նրան.
3) խնամել իր կենդանիներին.
4) ***որպեսզի ժառանգներն իրենց մահվան դեպքում որոշակի ձևով տնօրինեն իրենց կտակված գույքը.***

336. Ո՞վ կարող է նշանակվել ենթաժառանգ.
1) միայն ըստ օրենքի ժառանգները.
2) միայն ըստ կտակի ժառանգները.
3) ***ցանկացած անձ, ով ՀՀ քաղաքացիական օրենգրքի համաձայն կարող է լինել և ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգ.***
4) միայն ժառանգատու թոռները.

337. Կտակ կարող է կազմվել
1) միայն այն գույքի վերաբերյալ, որը կտակ կազմելիս պատկանել է կտակարարին.
2) ***ցանկացած՝ ներառյալ ապագայում ձեռք բերվելիք գույքի վերաբերյալ.***
3) միայն այն գույքի վերաբերյալ, որի ձեռքբերման համար կնքվել է նախնական պայմանագիր.
4) միայն այն գույքի վերաբերյալ, որը կտակ կազմելիս և դրանից առնվազն 1 տարի առաջ պատկանել է կտակարարին.

338. Կտակարարն իրավունք ունի վերացնել կտակը.
1) վավերացված կտակը վերացման ենթակա չէ.
2) կարող է վերացվել միայն, եթե կազմվել է օրենքով սահմանված պահանջների խախտմամբ.
3) ***կարող է վերացվել ցանկացած ժամանակ.***
4) կարող է վերացվել միայն այն անձի պահանջով, ում օգտին կազմված է կտակը.

339. Ո՞վ իրավունք ունի ծանոթանալ փակ կտակի բովանդակությանը՝ դրա վավերացման ժամանակ.
1) ***բացի կտակարարից ոչ ոք.***
2) միայն կտակարարը և նոտարը.
3) միայն կտակարարը, նոտարը, իսկ եթե վավերացմանը մասնակցել են վկաներ, նաև վկաները.
4) միայն կտակարարը, նոտարը, վավերացմանը մասնակցած վկաները, իսկ այն դեպքերում, երբ կտակարարը չի կարողանում անձամբ ստորագրել կտակը՝ նաև նրա փոխարեն կտակը ստորագրած անձը.

340. Զինվորական մասերի հրամանատարների կողմից կարող են վավերացվել
1) միայն զինծառայողների կտակները.
2) ***զինծառայողների, իսկ զինվորական մասերի տեղաբաշխման կետերում, որտեղ չկան նոտարներ, նաև այդ զինվորական մասերում աշխատող քաղաքացիական անձանց, նրանց ընտանիքի անդամների և զինծառայողների ընտանիքի անդամների կտակները.***
3) զինծառայողների, զինվորական մասերում աշխատող քաղաքացիական անձանց, նրանց ընտանիքի անդամների և զինծառայողների ընտանիքի անդամների կտակները՝ անկախ զինվորական մասի տեղակայման վայրից.
4) զինվորական մասերի տեղաբաշխման այն կետերում, որտեղ չկան նոտարներ, ցանկացած անձի կտակ.